24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1998 ՀԻՆԳՇԱԲԹԻ #177 (1680)

Azg
Azg
armenian daily

Ռուսաստանի նոր արտգործնախարարը դատափետում է անջատականությունը

ՄԱԿ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Մարտնչող անջատականության վտանգավորության մասին է նախազգուշացրել Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իվանովը՝ ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում:

Նրա կարծիքով, անջատականությունը հաճախ միանում է ահաբեկչությանը եւ կրոնական մոլեռանդությանը՝ դառնալով միջազգային հարաբերություններն աղակալուցնող եւս մեկ գործոն: Անջատականությունն անխուսափելիորեն հրահրում է ներժողովրդական հակամարտություններ, որոնց մեջ հաճախ ներքաշվում են հարեւան պետություններ, ինչը հող է ստեղծում տարածաշրջանային ճգնաժամերի համար:

«Աբխազիայի 150 երկրներում ապրում է ավելի քան երկուուկես հազար ազգային փոքրամասնություն, ասել է նախարարը: Եթե նրանք բոլորը ձգտեին ստեղծել իրենց պետական կազմավորումները, արդա դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի կորստաբեր հետեւանքների դա կարող էր հանգեցնել: Նրանց, ովքեր «սնուցում» են անջատականությունը, չէր խանգարի հիշել այդ մասին»:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Վաղը ՄԱԿ-ի նստաշրջանը կբացվի ՀՀ նախագահի ելույթով

Սեպտեմբերի 23-ի առավոտյան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը կնոջ Բելլա Քոչարյանի, ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի, ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Սուսյա Արզարյանի եւ ՀՀ նախագահի օգնական Արմեն Գեւորգյանի ուղեկցությամբ մեկնեց ԱՄՆ: Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանին մասնակցելու: Սեպտեմբերի 25-ին ասամբլեայի 53-րդ նստաշրջանը կբացվի ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթով, որը կհեռարձակվի ուղիղ եթերով նույն օրը, ժամը 19-ին ՀՀ հեռուստատեսության առաջին ծրագրով:

Նախագահը Նյու Յորքում կհանդիպի Կոֆի Անանի, «Հայաստան» հիմնադրամի Արեւելյան գրասենյակի, ինչպես նաեւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն Նյու Յորքում կմիանա ՀՀ պատվիրակությանը, որի հետ կմեկնի Լոս Անջելես՝ մասնակցելու նախագահ Ռոբերտ Քոչարյանի պատվին Քրիս Քրիսթոֆերսոնի կազմակերպած ընդունելությանը: Նախագահը Լոս Անջելեսում կհանդիպի երեք կուսակցությունների, «Հայաստան» հիմնադրամի Արեւմտյան գրասենյակի, հայ համայնքի վեց հազարից ավելի ներկայացուցիչների հետ: Լոս Անջելեսում կտրվի երկու եկեղեցիների համատեղ պատարագ:

Նախագահը երկուշաբթի օրը Լոս Անջելեսի քաղաքապետ Ռիչարդ Ռիորդանի նստավայրում կհանդիպի խորհրդարանների հետ, կայցելի «Հայթեք» գործարան: Նույն օրը նախագահը կհանդիպի Համաշխարհային գործերի խորհրդի հետ:

ՀՀ պատվիրակությունը Ջոն Հանթսմանի հրավերով երեքշաբթի օրը կմեկնի Յուտա, որտեղ կայցելի Հանթսմանի կենտրոնական գրասենյակ: Տեղի կունենա հանդիպում Սալթ Լեյք Սիթիի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակի այս հաղորդագրությանը մեր կողմից ավելացնենք, որ նախագահ Ռոբերտ Քոչարյանը սեպտեմբերի 24-ին, նախքան Լոս Անջելես մեկնելը, Նյու Յորքի Marriott Marquis հյուրանոցի մեծ դահլիճում, երեկոյան ժամը 7-ին հրաժարակային ելույթ է ունենալու Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձի առթիվ: Մեր ունեցած տեղեկություններով, բազմաթիվ հայեր, ոչ միայն Նյու Յորքի տարածաշրջանից, ներկա են գտնվելու այդ հանդիպմանը, մարդկանց ուրախությունը...

Օրինակ, Բոստոնում լույս տեսնող ՈԱԿ «Առինյն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթը Նյու Ինգլենդի տարածաշրջանի հայերի համար այդ առթիվ դեռեւս Նյու Յորք ավտոբուսներով երթ է կազմակերպել:

Ինչ վերաբերում է Լոս Անջելեսի ճանկերությունին, որը տեղի է ունենալու Century Plaza հյուրանոցի մեծ դահլիճում, արդեն իսկ գրաղված են բոլոր 1700 աթոռները: Շատ լեգուներն ասում են, որ վերջին 10 օրերին կազմակերպիչները պահել են 10 հոգանոց սեղանի 1500 դոլար արժող տոմսերը, փոխարենը վաճառելով 5000 դոլարանոցները: (Թեեւ, մյուս կողմից, այնքան էլ վատ բան չկա դրա մեջ, քանզի ամբողջ հասույթը տրամադրվելու է Միացյալ հայկական ֆոնդի մարդասիրական օգնության թռիչքներին):

Այս կողմից, դժգոհ են Լոս Անջելեսի մեր գործընկերներից շատերը: Նշյալ հանդիսությանը լրագրողների մուտքը վճարովի է: Փոխարենը կազմակերպիչները դահլիճի կողքին առանձին սենյակ են առաջարկում մեր գործընկերներին, որտեղից նրանք կարող են հեռուստակրանից հետեւել հանդիսությանը...

Դահլիճում չի թույլատրվում նկարահանել ամբողջ լուսանկարել: Այդ մենաշնորհը վերապահված է միայն MGM կինոընկերության մասնագետներին:

Հոկտեմբերի 1-ին ՀՀ պատվիրակությունը կվերադառնա Հայաստան:

ՆԱԽԱԳԾԵՐ

Քաղաքական խորհրդում քննարկվեց ընտրական օրենսգիրքը

Միացյալ ճակատ եւ «Երկրապահ»

ՆԱՐԻՆԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

Քաղաքական խորհրդի հերթական նիստը չխախտեց տխուր ավանդույթը. լրագրողների մուտքը դարձյալ չարգելվեց: «Ազգը» ստիպված էր բավարարվել նիստից հետո մասնակիցների հետ զրույցի հնարավորությամբ: Իսկ նիստը հետաքրքիր էր, այս անգամ ներկազմակերպական եւ տեսական բանավեճերի փոխարեն քաղաքական խորհրդի անդամ հայաստանյան կուսակցություններին ներկայացվեցին ընտրական օրենսգրքի երկու տարբերակները, որոնք արդեն շրջանառության մեջ են Ազգային ժողովում: Միացյալ ճակատի տարբերակը (այսպես կոչում ենք «Հայրենիք» պատգամավորական խմբի, Հայկոմկուսի, Վիգեն Խաչատրյանի եւ ԻՄ-ի ընտրական օրենսգրքերի միասնական նախագիծը) Քաղաքական խորհրդի դաշին հանձնեց Ներսես Ձեյնալվանդյանը (ԻՄ), «Երկրապահի» տարբերակը՝ Աժ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը, որը պետահրավական հանձնաժողովի փոխնախագահն է եւ «Երկրապահ» պատգամավորական խմբի անդամ: Միացյալ տարբերակի մասին հայտնի է գրեթե ամեն ինչ. խորհրդավորության թեթեւ շղարշով պատված էր «Երկրապահի» նախագիծը, ուստի առաջարկեցին Վիկտոր Դալլաքյանին պարզաբանել ընտրական օրենսգրքի նրանց տարբերակի հիմնական դրույթները:

«Երկրապահ» պատգամավորական խմբի ընտրական օրենսգիրքը ամփոփում է զարգացած եվրոպական երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, ինչպես ԱՄՆ փորձը, ինքնատահությամբ արձանագրեց Վիկտոր Դալլաքյանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որը հայտնի կովախնձորներից է, կազմվելու է մինչեւ 15 անդամից, որոնցից հինգը պետական պատասխանատու: Այս պատասխանատուներին նշանակելու է կառավարությունը կուսակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Իրեն օրինակ՝ Վ. Դալլաքյանը փաստեց, թե Գերմանիայում եւ Ֆրանսիայում ընտրությունների կազմակերպիչը ՆԳ նախարարությունն է, այլ երկրներում դա վերապահվում է արդարադատության նախարարությանը կամ ընդհանուր կառավարությանը: Ելնելով Հայաստանի առանձնահատկություններից՝ նախընտրել են կառավարության վճռորոշ ձայնը՝ կուսակցությունների խորհրդատվության իրավունքով: Մնացյալ մինչեւ տասն անդամները կհամալրեն ԿԸՀ կազմը այն կուսակցությունները, որոնք 25-օրյա ժամկետում առաջինը կհավաքեն 35 հազար եւ ավելի ստորագրություն: Այսպիսով, Աժում 5 տոկոս ունեցող եւ Աժ-ից դուրս մնացած կուսակցությունների բանավեճը վերանում է: ԿԸՀ-ում անդամ կունենա նա, ով բավականաչափ սեղմ ժամկետում կտանա Հայաստանի 35 հազար քաղաքացու հավանության ղեկ: Վ. Դալլաքյանը շեշտեց, որ «Երկրապահն» առաջնորդվում է մեծ կուսակցություններ եւ կայուն քաղաքական համակարգ ձեւավորելու նպատակով:

Տես էջ 2

Քլինթոնի վարկաբեկումը բարձրացնում է նրա ռեյտինգը...

Անցյալ ուրբաթ օրը Մոնիկա Լեւինսկու հետ նախագահ Բիլ Քլինթոնի սիրա-սեռավեթի մասին անկախ հանձնաժողովի նախագահ Քեն Սթարի ներկայացրած 445 էջանոց թղթածրարի, հարակից հազարավոր էջ թղթերի ու նկարների, ինչպես նաեւ 11 փաստաթղթերով նրան իմպիչմենտի ենթարկելու մասին տեղեկացավ ամբողջ աշխարհը, իսկ շաբաթը հեռուստատեսությամբ 4 ժամ շարունակ հետեւեցին Մ. Նահանգների նախագահի վարկաբեկման... գործընթացին: Թերթերն ու հեռուստակայանները մանրամասնությամբ, իրերն ու մարմնի ամենաինտիմ մասերն ու դրանց հետ տարբեր ձեւերով կատարվածը կոչեցին իրենց բուն անուններով, նկարագրեցին ու վերանկարագրեցին: Այնքան, որ արդեն 8-10 տարեկան ամերիկացի երեխաներն իրենց մայրիկներին սեխի տարբեր ձեւերի մասին սկսել են տարօրինակ հարցեր տալ: Այնուամենայնիվ, վերջին մի քանի օրերի հարցախույզերի արդյունքները ցույց են տալիս նախագահ Քլինթոնի ռեյտինգի հավելում՝ մինչեւ 6 տոկոս:

Մասնագետները այս տարօրինակ երեւույթը բացատրում են 2 հանգամանքով, որոնք շաղկապված են միմյանց: Առաջին՝ միջին ամերիկացին, ի տես նախագահի վարկաբեկման անլուր արշավի գտնում է, որ այդ բոլորը արգահատելի, զզվելի է, եւ երկրորդը՝ ամերիկյան ամենահեղինակավոր մեկնաբանները, ի տարբերություն իրենց իսկ աշխատած թերթերի ու հեռուստակայանների, դատապարտում են կատարվածը, ճնշադատում Սթարի հանձնաժողովի աշխատանքային ձեւը, նպատակները ու հրապարակայնությունը:

Ինչ վերաբերում է իրեն՝ նախագահ Քլինթոնին, ուրբաթ օրը նախաճաշի առթիվ ժամանակ նա ասաց. «Բարեւներ չափով չի զղջում, սակայն դա առաջխաղաց եմ»: Թեեւ, մյուս կողմից, նրա հոգեւոր խոստովանահայր Ռոբերտ Շուլլերն ասաց. «Նա ստեց: Նա 3-րդ հասարակական-պետական դեմքն էր, որ ստեց իմ առաջ: Առաջինը Նիքսոնն էր, երկրորդը՝ Ագնյուն, որոնք ստեցին համարձակորեն: Իսկ հիմա՝ Քլինթոնը»:

Հետաքրքրական է նաեւ ֆրանսիական «Լը Մոնդ» մեծահամբավ թերթի խմբագրակազմի տնօրեն Էդվի Պլենելի կարծիքը. «Մեր կարծիքով, այն նախագահը, որ սիրավեթ ունի, հնարիկ է»:

Ինչ վերաբերում է մեզ՝ հայերիս, թեեւ այստեղ ոչ ոք ոչ ոքի կարծիքը չի հարցրել դեռեւս, սակայն կարծում ենք, որ հայ տղամարդը ոչիսի կարճ ոչ-տասխաներ՝ «Քլինթոնը բ...ի տարին ա ուստ եկել»:

Վրաստանի ոստնախարարը կգա Երեւան

Սեպտեմբերի 25-ին պաշտոնական այցով Երեւան կժամանի Վրաստանի կառավարական պատվիրակությունը պետական նախարար (վարչապետ) Վաժա Լորդիփանիձեի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում են էներգետիկայի նախարարը, Վրաստանի երկաթգծի պատասխանատուն, պաշտոնական այլ անձինք:

Այցի ընթացքում նախատեսվում են հանդիպումներ ՀՀ Ազգային ժողովում, կառավարությունում: Սա նոր վարչապետի առաջին պաշտոնական այցելությունն է արտասահման:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՍՏԱԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՄԱՌՈՏ

Զարթոնք գյուղում կարանտինը վերացված է

ԵՐԵՎԱՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնեցին, որ նախարար Գագիկ Ստամբոլցյանն այսօր հրաման է ստորագրել խոլերայի դեմքերի կատակցությամբ Արմավիրի Զարթոնք գյուղում սեպտեմբերի 4-ից հայտարարված կարանտինը դադարեցնելու մասին: Որոշումն ընդունվել է, քանի որ իրականացված հակախոլերային եւ կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ սեպտեմբերի 12-23-ը օջախում նոր հիվանդներ չեն հայտնաբերվել:

Հոկտեմբերին՝ հրամանատարա-շտաբային զորավարժություններ

ԵՐԵՎԱՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊՆ: Համաձայն ՀՀ զինված ուժերի օպերատիվ պատրաստականության պլանի, 1998 թ. հոկտեմբեր ամսվա առաջին կեսին հանրապետության արեւելյան շրջաններում անցկացվելու են հրամանատարա-շտաբային զորավարժություններ՝ տարածային զինկոմիսարիատների ներգրավմամբ: Այս մասին հայտնեցին ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության եւ քարոզչության վարչությունից:

ԿԱՊ

Հայաստանում ստեղծվել է նոր ճգնաժամ. այս անգամ տեղեկատվության փոխանակման ոլորտում

ԵՐԵՎԱՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊՆ: Հայաստանի գիտնականները ելք են փնտրում տեղեկատվության փոխանակման հարցում երկրում ստեղծված ճգնաժամից, որն արգելակում է ազգային գիտության զարգացումը:

Հայաստանի շրջափակումը զրկեց հայ գիտնականներին գիտական գրականությունից օգտվելու հնարավորությունից, արդյունքում խզվեցին նրանց կապերը այլ երկրների գործընկերների հետ:

Տեղեկատվական շրջափակումը ճեղքեց Ինտերնետի մուտքը Հայաստան, սակայն, ինչպես գտնում է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատիզացման գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն Վլադիմիր Սահակյանը, այդ ոլորտում Հայաստանում գործող սահմանափակումները կրկին ստեղծել են փակուղային իրավիճակ:

Նա նշեց, որ չնայած ԳԱԱ ցանցի Ինտերնետի հետ կապը ներկայումս իրագործվում է երեք կազմակերպությունների երեւանի ֆիզիկայի ինստիտուտի (ԵրՖԻ), Ինֆոկոմի եւ Արմինկոյի միջոցով, սակայն տեղեկատվության փոխանակության ողջ ծավալը չի ապահովվում:

- ԵրՖԻ-ն ունի սեփական արբանյակային անտենա, որի հզորությունը փոքր է, իսկ օգտվողների թիվը շատ, հետեւաբար չի ապահովվում հուսալի եւ անընդմեջ կապ:

- Ինֆոկոմը եւ Արմինկոն օգտվում են Արմենտելի կապուղիներից, որոնց քանակը եւ հզորությունը խիստ անբավարար են:

Արտաքին աշխարհի հետ սեփական կապի հնարավորություն ԳԱԱ-ին չի տրվում, մինչդեռ այն կապահովեր կապուղու անհրաժեշտ հզորությունն ու հուսալիությունը եւ կխնայեր պետական միջոցները: Միջազգային պրովայդերների միջոցով ելքի տարեկան վարձավճարը կազմում է մոտ 15 հազար ԱՄՆ դոլար, իսկ Արմենտելը նույն ծառայությունը տրամադրում է 2-3 անգամ միջազգայինից բարձր գներով:

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
ՕՐԱԹԵՐԹ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՍՈՐԵԼՈՎ ՀԱՆԴԵՍԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Կայունությունը ժողովրդավարություն չի ծնում, այլ՝ ճնած երկիր

Հանրաքվեության նախագահին առընթեր սահմանադրական փոփոխությունների հերթական նիստում ճշտվեց հարցերի հարցը՝ հանրաքվեության նախագահին վերաբերող գլուխը: Նիստը բացվեց նախագահող Պարույր Հայրիկյանի կանխորոշող ուղղումով: Պարզվում է, որ Ռոբերտ Քոչարյանը չի ասել, թե ինքը հանձնել է նախագահական ժամկետը յոթ տարով սահմանափակելուն, նա ընդամենը նշել է, որ դեմ չէ: Այս երկու ոգեղումների միջև էական տարբերություն կա, եւ 12 կողմ, 7 դեմ ձայներով հաստատվեց գործող տարբերակը՝ այսուհետ եւս Հայաստանի հանրաքվեության նախագահը կրաստանավարի 5 տարի: Այս ժամկետի կողմնակիցները, որոնք ոչեական ոլորտներ էին՝ դասախրավական համակարգից, հիմնավորեցին մոգական տարողունակ մի բառով՝ կայունություն: Պարույր Հայրիկյանը տեսնում էր, թե որքան շատ ընտրություններ, այնքան շատ ժողովրդավարություն, սակայն ԱԳ երկու անդամները, հանրաքվեության գինվորական դասախազը, արդարադատության, ԵԳ եւ ԱԱ նախարարության իրավաբան այրերը եւ «Հանրաքվեական» կուսակցության ներկայացուցիչները վճռաբարկեցին, որ անընդմեջ ընտրությունները, հատկապես եթե դրանք համընկնում են, այսինքն՝ նախագահական, խորհրդարանական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կարող են ծանրաբեռնել բեռ դառնալ ընտրություններից ոչ այնքան բարի հուշեր ունեցող մեր հաղթաթղթերի եւ բավական սուղ ոլեական բյուջեի համար: Վկայակոչվեց եւ միջազգային փորձը, եւ անցնում զարգացման առավելությունը:

Օրակարգում երկրորդը հանրաքվեության նախագահի երդման տեքստն էր: Հիշեցնենք՝ ցայժմ հայաստանյան երկու նախագահները երեք անգամ երդվել են, երեքն էլ՝ յուրովի: Յուրաքանչյուր նախագահ իր գործունեության սկիզբը նախանշել է ըստ իր ճաշակի: Ընդ որում, Լեւոն Տեր-Պետրոսյանի երդման արարողությունից տարբերել էր երեւորդը՝ կառուցված ասվածաբնյան գործիքների ընդլայնմամբ: Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը առաջարկեց իրավական չոր ձեւակերպումներ՝ զերծ ճարտիկիսոփայական զեղումներից: Երդման տեքստից բացառվեց անգամ «ժողովրդի կամքով» արտահայտությունը: Այդուհանդերձ, 14 նախագահը կերդվի մեկ զուտ նախագասությամբ. «Ստանձնելով 14 նախագահի գործառույթները՝ երդվում եմ՝ հետեւել Սահմանադրության պահպանմանը, աղահովել օրենքների, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, լինել հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության, անվտանգության եւ պետական իշխանության հաջորդականության երաշխավորը»:

Հայաստանում վարչապետը խորհրդանշական դեմք չէ

Ռոբերտ Քոչարյանը նախընտրական շրջանում հավատում էր, որ սահմանադրական փոփոխությունների գերնպատակը իրեն վերապահված լիազորությունների սահմանափակումն է՝ հօգուտ Ազգային ժողովի եւ կառավարության: Սակայն, ինչպես խոստովանեցին հանձնաժողովի անդամները, մինչ այսօր այս խոստումն ամրագրող ոչ մի հայր չի կատարվել, ընդամենը լեզվաբրամաբանական շտկումներ: Ալեքսանդր Աղամալյանը (ԳԻՄՔՄի), դեմոկրատական կուսակցությունը եւ նրանց համակարծիք մի շարք այլ գործիչներ առաջարկեցին հետեւյալ տարբերակը. «Մի համաձայնությամբ՝ նախագահը նշանակում եւ ազատում է վարչապետին: Վարչապետի առաջարկությամբ Մի համապատասխան հանձնաժողովներում ճնշարկումներից հետո նշանակում եւ ազատում է կառավարության անդամներին»: Ա. Աղամալյանն ընդգծեց, թե այս հայրը նշանակում է վարչապետի պաշտոնի հաղթահարանացում եւ Մի դերի բարձրացում. «Վարչապետը դառնում է հանրապետական դեմք, սանում է Ազգային ժողովի մեծամասնության կուսակցական հենարանը»: Սակայն իրավաբան մասնագետները դարձյալ առարկեցին՝ նույն կայունության կարգախոսով, ինչին ի պատասխան, Ա. Աղամալյանը ստիպված էր ասել. «Կայունությունը ժողովրդավարություն չի տալիս, այլ տալիս է ճնած երկիր»:

Բուռն, բայց սրամիտ բանավեճ բարձրացավ նաեւ նախագահի կողմից Ազգային ժողովը լուծարելու մեխանիզմը կարգավորող հոդվածի շուրջ: Պարույր Հայրիկյանը միանձնակ էր՝ 51 տոկոս ձեռներով ընտրված նախագահը չդիտէ իրավունք ունենա լուծարելու ընտրողների 90 տոկոս ձայներով ձեւավորված խորհրդարանը. «Պետության գլուխը արհեստական հասկացություն է», եզրափակեց ԻՄ դեկավարը: Բայց հանձնաժողովը տարակարծիք էր: Իրավաբանները պնդեցին իրենց թվաբանությունը՝ 131-ը հավասար է 1-ի: Հանրաքվեության նախագահի մանդատը հավասարազոր, եթե ոչ ավելին է խորհրդարանական բոլոր մանդատներից՝ հաշվառելով որ ընտրված է նախագահական կառավարման տարբերակը՝ «կիսա» նախագանցով: Այս հարցերի քվեարկությունը հետաձգվեց մինչեւ հոկտեմբերի 2-ը:

ԱՐՄԵՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

Կհաջողվի՞ կատարելագործել տեղական ինքնակառավարումը

Երեկ տեղի ունեցավ ՀՀ նախագահին առընթեր տեղական ինքնակառավարման հանձնաժողովի միասնական պետական խորհրդակցություն մշակող հանձնաժողովի հերթական նիստը: ՀՀ նախագահի խորհրդական Վահան Հովհաննիսյանը տեղեկացրեց հայտնեց, որ իրենց հանձնաժողովն ուսումնասիրում է, սահմանադրական բարեփոխումներ նախապատրաստող Հայրիկյանի հանձնաժողովը դեկտեմբերին երեւի կհասնի այն փուլին, որը վերաբերում է Սահմանադրության մեջ տեղական ինքնակառավարման հարցերին, իսկ իրենք այդ առթիվ ցանկանում են իրենց առջեւ ծառացած երեք խնդիրներից միայն առաջինն են լուծել: Այնուհետեւ հանձնաժողովն օրակարգի առաջին հարցով զբաղվեց ինքնակառավարման գործունեության համար անհրաժեշտ բոլոր խնդիրները, հանրապետության մարզային բաժանումն իրականացվել է ստորաբաժանումներ, որի հետեւանքով բազմաթիվ համայնքներ հայտնվել են ոչ այն մարզերի կազմում, որոնցում պիտի լինեին, մինչեւ հիմա չկա «Օրենք տարածային կառավարման մասին», որի հետեւանքով հայտնի չէ, թե ի՞նչ է տնօրինում, տիրապետում եւ կառավարում համայնքը, ի՞նչ մարզ, եւ ի՞նչ հանրապետական մարմիններ, համայնքների բացարձակ մեծամասնությունն ի վիճակի չէ իրականացնել միջհամայնքային ճանապարհների շինարարություն, ասֆալտապատում, չի կարողանում պահպանել առանց այն էլ քայքայված կոմունալ ցանցերը եւ այլն. եւ այլն: Զգացվում էր, որ պրն Սարգսյանը իսկապես հաջողության է համայնքային կառավարման խնդիրներին եւ պետք է ենթադրել, որ նրա հարցադրումները, ժամկետները եւ վերջնական տարի բերելուց հետո, կգրվեն հանձնաժողովի եռաբնավորությունների հիմքում:

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Քաղաքական խորհրդում քննարկվեց...

Սկիզբը էջ 1

Նույն նոյեմբերին է ուղղված համաժողովական եւ մեծամասնական տեղերի հարաբերակցությունը: «Երկրապահը» նախընտրեց 80 մեծամասնական, 51 համամասնական տարբերակը: Ըստ այդմ փոքր կուսակցությունները հնարավորություն կունենան մուտք գործել խորհրդարան միայն նախընտրական դաշինքների միջոցով: դա «Երկրապահների» դասկերացմամբ գերխնդիր հանդիսացող իշխանական կայունության երաշխիքն է:

Ընտրական օրենսգրքի այս տարբերակը մերժում է Պարույր Հայրիկյանի ընտրական ցուցակների գաղափարը իբրեւ մարդու ընտրական իրավունքների սահմանափակող: Յուրաքանչյուր ընտրող իրավունք ունի մինչեւ ընտրության օրվա վերջին ոպահը որոշել իր մասնակցության երկընտրանքը: Այս նախագծով ընտրական ցուցակները կկազմվեն համայնքներում: Նախատեսված է դրանց բոլորաթերթան կարգը: Ընտրական օրենսգրքի «Երկրապահի» տարբերակը ամրագրում է նաեւ խստագույն պատասխանատվություն գեղծարարների եւ ընտրական օրինախախտների համար: Ինչպես ասաց Ա. Դաղբաշյանը մինչեւ 20 տարի ազատազրկում եւ ոչ մի համաներում:

Քաղաքական խորհրդում որոշվեց ընտրական հանձնաժողովների կազմության եւ համամասնական մեծամասնական հարաբերակցության խնդիրները դարձնել առանձին հնարկման առարկա: Ա. Կանաչեանները վկայում են, որ կուսակցությունները գործուն մասնակցություն չցուցաբերեցին նիստին: Փոքր կուսակցությունները ուշ-ուշով հետեւում են կեսերի նժարին, որն ավելի ծանր կլինի, այն էլ նժարին էլ կաղապատեն: ՀՅԴ-ն, դժգոհ միասնական տարբերակից, ոչ նրանց ընտրական հանձնաժողովներում մեկ տեղ էր հատկացվել ի տարբերություն խորհրդարանական խմբակցություն ունեցող կուսակցությունների, եւս սոցսարդական դիտարկում է որդեգրել: Ա. Ռակս ցույց է տալիս, որ «Երկրապահը» (իմա «Երկրապահ» կամավորական միությունը) Հանրապետական կուսակցությունը եւ «Երկրապահ» ոպաշտպանական խումբը) պետք է իր ուժերը չափի Ժողովրդավարական հայրենիքի, ՀՅԵ-ի, ԻՄ-ի, ԱԺՄ-ի եւ Հայկոմկասի հետ: Քաղաքական մրցամարտում հաճախը ոչ միշտ է ուղիղ հաղթանակին, կամ հակադարձ համեմատական որակին: Հայկական ժողովրդավարության ճանապարհներն անմեկնելի են:

Թալանվեց Հրանտ Բագրատյանի գրասենյակը

ԵՐԵՎԱՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Նոյեմբեր հանգստից հետո՝ սեպտեմբերի 22-ին ներկայանալով աշխատավայր, Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորած «Ազատություն» կուսակցության գրասենյակի եւ «Մեմֆիս» ոպատասխանատուների աշխատակիցները գրասենյակը գտել են թալանված: Հանցագործները հրեշ սանդուղքով մտել են յուրաքանչյուր հարկում գտնվող գրասենյակ եւ հափշտակել համակարգիչը, սարքավորումներ, հայ-ռուսերեն բառարան, տեսանյութեր եւ այլն: Դատաքննչական ոստիկանությունը մոտեցել են ոպատահարին, սակայն, ինչպես ենթադրում են գրասենյակի եւ խմբագրության աշխատակիցները, հանցագործները չեն կարողացել դրամ ոպատահանից դուրս հանել: Նրանցական վնասը կազմում է տուրք 365 հազար դրամ: «Պնդարան» համայնքի ԵԳԻ աշխատակիցները անցկացրել են տեղազննություն եւ վերցրել մատնահետքեր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է հարի
Գլխավոր եւ հրատարակչ
«Ազգ» բերի խմբագրի խորհուրդ
Երեւան 375010, Գրիգորյանի 47
Թեմ 562941 AT&T (3742) 151063,
e-mail INTERNET: azg@armenia.com
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ՄԵՍԻԵՓԵՆԿՈ / թեմ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆ / թեմ. 526921
Տնօրեն
ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆ / թեմ. 562863
Գովազդային ծառայություն / 581041
Apple Macintosh
Էջադրվել է համակարգչային ծրագրերի
Ցանցային «Ազգին» դարձյալ է
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVETIKIAN / phone: 521635
47 Hanrapetutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Կոմկուսը «արտաքուստ տոնական տրամադրությամբ ողողված հայաստանյան զարգացումներով ծանոց», հերթական ծրագրային ասուլիսն էր հրավիրել այսօր Անկախության հրապարակում նախատեսված կարմիր հանրահավաքն ազդարարելու, ուսանողական իրադարձությունները գնահատելու, ինչպես նաև «ազգային բավականությամբ վկայակոչեց «Նեզավիսիմայա գազետայի» հրապարակումներից մեկը, որի համաձայն «Ռուսաստանը կարող են փրկել կարմիրները կամ գոնե վարդագույնները» (իսկապես Աստծո, որ «երկնագույնների» մասին դեռ չի խոսվում Լ. Պ.)։ Ռուսաստանում ժողովրդի վիճակը սոսկալի է, երաշտը հոնձել է բերքը, սովը չորել է Ռուսաստանի իր քոնամիների», թեպետ «սա դեռևս կարմիրների վերադարձը չէ. պետությունը պիտի վերագտնի իր կարգավորող դերը տնտեսության մեջ։ Մենք հայերս այլ ելք չունենք վաղ թե ուշ չոքելով գնալու ենք Ռուսաստան-Բելառուս միություն»։

Մխսելով Պրիմակովի հայտարարության վարքը եւ Ռուսաստանից Հայաստան հերթական սահուն անցման իրավունքը, ասաց՝ Ռուսաստանի ներկայիս ղեկավարությունը ինչպես Ելցինի ժամանակ, կասեցրեց ազգային սահմանների ապաշրջանցումը։ Ռուսաստանի ներկայիս կառավարությունը չի կարող տրամադրել նոր սեփական ելքի իրավունք։

Պրն Բաղդասարյանը գոհունակությամբ նշեց, որ հայ կոմկուսի կարգախոսները համահունչ են ոչ միայն Հայաստանի «հաղթական մի շարք ազդեցիկ դեմքերի եւ ուժերի», այլեւ Ռուսաստանի կոմկուսի կարգախոսներին, որ Ռուսաստանում տրամվող ցույցերում «չի բացառվում նաեւ բանակին մոտիկ կանգնած ուժերի մասնակցությունը»։ Նա

«Կարմիրները կամ վարդագույնները կփրկեն Ռուսաստանը»

Հարգանք է Սերգեյ Բաղդասարյանը եւ երդաշտի համար մեղադրում... Ելցինին

իբրեւ «ոչ ինքնաբերաբար» տարաբերու վերականգնումը վերահաստատելու նպատակով «Քոչարյանի վարչակարգի» ընդդեմ Հայկոմկուսի առաջնորդ Սերգեյ Բաղդասարյանի փաստարկները բազմիցս արծարծվել են իշխանության հեղինակությունը զրոյացված վիճակում է, ժողովուրդը տարակվում է սեփական յուղի մեջ, դարաբաղյան հարցում համաձայնած փաստաթուղթ է, Հայաստանի իրավիճակը հղի է անկանխատեսելի հետեւանքներով (ընթերցողը, հուսով եմ, չի տարապիր «Պրավդայի» տխրահռչակ գլուխգործոցը հիշելով) եւ այլն։ Այս ամենն, ըստ կոմկուսի առաջնորդի, «Ռուսաստանում բարձրացող ալիքի» եւ «մեծ եղբոր» տանը տեղի ունեցող փոփոխությունների փոխարեն Պրիմակովի կառավարության ստեղծման մասին Ս զուգակցությամբ աբսուրդ իշխանությունների դեմ ծառայում դայար մղելու դաշտ է ձեւավորել, որ կոմկուսը մտադիր է իրացնել հաղթական թեժ աշունից իր բաժնեմասը կորզելու նպատակով հանրահավաքների մի ամբողջ շարանի եւ հաղթական այլ ակցիաների միջոցով։ Ըստ [illegible], կոմկուսը զայրույթ է հայտնելու ժողովրդի կամքի ոտնահարման մոտ 1 տարի առաջ Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու համար հավաքված 1 մլն ստորագրությունների անտեսման առթիվ։ Կոմկուսի հաջող հանրահավաքը նախատեսված է հոկտեմբերի 7-ին՝ ի համեմատություն ռուսաստանյան բողոքի ցույցերի, որ որպես Բաղդասարյանի հանդիպումը չեն կարող ուրջանցել Հայաստանը բողոքի, «գուցե, հեռագայում նաեւ անհնազանդության ալիք» հրահրելով նաեւ այստեղ։

Պրն Բաղդասարյանը գոհունակությամբ նշեց, որ հայ կոմկուսի կարգախոսները համահունչ են ոչ միայն Հայաստանի «հաղթական մի շարք ազդեցիկ դեմքերի եւ ուժերի», այլեւ Ռուսաստանի կոմկուսի կարգախոսներին, որ Ռուսաստանում տրամվող ցույցերում «չի բացառվում նաեւ բանակին մոտիկ կանգնած ուժերի մասնակցությունը»։ Նա



նի դասնը, ոգեւորված արձանագրեց կոմկուսի առաջնորդարդ եւ, վերադառնալով Հայաստան, հայտարարեց. «Մեր դայքարը հասել է հաստատակածին, իսկ բեւեռը դեռ առջեւում է»։

«Մենք այն ուժն ենք, որ Հայաստանի առաջան կաղում ենք Ռուսաստանի վերացման հեռ (սա առդեն բարձ բառակաղակցություն է որ Բաղդասարյանի հիրեղ բառարարում-Լ.Պ.)», շարունակեց նա՝ անմնացորդ աջակցություն հայտնելով Ռուսաստանի կոմկուսի 10-րդ դիսնումում հաստատված կարգախոսներին. Կորչի ելցինի ռեժիմը. Կեցցե ազգային շահերի կառավարությունը։ Ռուսաստանի ներկայիս կառավարության նկատմամբ Հայկոմկուսի դիրորոշումն առայժմ հանդուրժողական է, քանզի Պրիմակովի կերդարը արեւմտամետությունից դեռի ազգային արժեքների հանակարգ որ ազգային արժեքների հանակարգ որ ջաղարձ է խոսանում։ Ռուսաստանը դուրս կգա ճգնաժամից «ի սարսաստի իր քոնամիների», թեպետ «սա դեռեւս կարմիրների վերադարձը չէ. պետությունը պիտի վերագտնի իր կարգավորող դերը տնտեսության մեջ։ Մենք հայերս այլ ելք չունենք վաղ թե ուշ չոքելով գնալու ենք Ռուսաստան-Բելառուս միություն»։

Մխսելով Պրիմակովի հայտարարության վարքը եւ Ռուսաստանից Հայաստան հերթական սահուն անցման իրավունքը, ասաց՝ Ռուսաստանի ներկայիս ղեկավարությունը ինչպես Ելցինի ժամանակ, կասեցրեց ազգային սահմանների ապաշրջանցումը։ Ռուսաստանի ներկայիս կառավարության ստեղծման մասին Ս զուգակցությամբ աբսուրդ իշխանությունների դեմ ծառայում դայար մղելու դաշտ է ձեւավորել, որ կոմկուսը մտադիր է իրացնել հաղթական թեժ աշունից իր բաժնեմասը կորզելու նպատակով հանրահավաքների մի ամբողջ շարանի եւ հաղթական այլ ակցիաների միջոցով։ Ըստ [illegible], կոմկուսը զայրույթ է հայտնելու ժողովրդի կամքի ոտնահարման մոտ 1 տարի առաջ Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու համար հավաքված 1 մլն ստորագրությունների անտեսման առթիվ։ Կոմկուսի հաջող հանրահավաքը նախատեսված է հոկտեմբերի 7-ին՝ ի համեմատություն ռուսաստանյան բողոքի ցույցերի, որ որպես Բաղդասարյանի հանդիպումը չեն կարող ուրջանցել Հայաստանը բողոքի, «գուցե, հեռագայում նաեւ անհնազանդության ալիք» հրահրելով նաեւ այստեղ։

Պրն Բաղդասարյանը գոհունակությամբ նշեց, որ հայ կոմկուսի կարգախոսները համահունչ են ոչ միայն Հայաստանի «հաղթական մի շարք ազդեցիկ դեմքերի եւ ուժերի», այլեւ Ռուսաստանի կոմկուսի կարգախոսներին, որ Ռուսաստանում տրամվող ցույցերում «չի բացառվում նաեւ բանակին մոտիկ կանգնած ուժերի մասնակցությունը»։ Նա

Հայաստանում ստեղծվել է նոր ճգնաժամ...

Սկիզբ էջ 1

11 փոսի եւ հեռահաղորդակցության նախարար Արսեն Վարդանյանն իր հերթին «Եղյան տարդանի» թղթակցին հայտնեց, որ բոլոր որոշումները, որոնք այսօր իրականացնում են արտաքին կապը սեփական միջոցներով, գործում են հավասակ օրենքի, քանի որ «11 կարի մասին» օրենքում ամրագրված է հանրապետության սահմանքներից դուրս կարի իրականացված Արմենտել ընկերության Լիսկլյուզիվ իրավունքը։ Նման իրավիճակ կարող է ստեղծվել այնքան ժամանակ, քանի դեռ Արմենտելը չի ստանում հանրապետության օգտվողների պահանջների ամբողջ ծավալը։ Միեւնույն ժամանակ, կառավարությունը չի կարող տրամադրել նոր սեփական եթի իրավունք։

Պրն Սահակյանը հաղորդված է, որ բնական ռեսուրսների եւ հաղորդակցության միջոցների ահմանափակությունը լինելու դայմաններում Հայաստանի հետագա զարգացման առաջնային ուղղություններից է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, ինչը կնպաստի նաեւ արդյունաբերության համաստասխան ճյուղերի զարգացմանը։

Պրն Սահակյանի կարծիքով, ստեղծված փակուղուց դուրս գալու համար անհրաժեշտ է գրկել Արմենտելին վերջնական մենաշնորհից, ստեղծելով առնվազն մրցակցության հնարավորություն։ «Կառավարությունը դեռ է գնա այդ հարցին, եթե ստանդարտված է հանրապետության զարգացման, այլ ոչ թե արտերկրյա ընկերության հարստացման խնդիրներով», ասաց նա։

Մյուս կողմից, սեղտեմբերի 23-ին «Եղյան տարդան» լրատվական գործակալությունը գրկվել էր հեռախոսային կապից օգտվելու հնարավորությունից։ անջատվել էին գործակալության բոլոր հեռախոսահամարները։ Արմենտելի հանդեպ ունեցած իր բոլոր դարտականությունները գործակալությունը կատարում է՝ ժամանակին մուծելով բոլոր նախատեսված վճարները։

Անջատման համար Արմենտելն ընտրել էր ժամը 17-ը, երբ սկսվել էր խենթ աշխատանքային օրը, եւ եթե անցավ անջատումը թյուրիմացության պատճառ է, ապա այն հնարավոր կլինի շտկել հաջորդ օրը միայն։ Մյուս կողմից, այդ ժամը լրատվական ցանցացած միջոցի համար աշխատանքի ամենագործած ժամանակահատվածն է։

Գործակալությունը հայտնում է ավելի քան 30 երկրներում գտնվող իր բոլոր բաժանորդների ներողամտությունը՝ հեռախոսակապի բացակայության դայմաններում լրատվական ժամանակների թերի լինելու համար։ Ներողամտություն է առաջացնում այն փաստը, որ Հայաստանում հեռահաղորդակցության բացային իրավունք ունեցող հունական Արմենտել կազմակերպությունը լուսի իր բաժանորդներին տրամադրող անջատված մասին նախազգուշացնելու մեխանիզմ, որի արդյունքում մեկ այլ օր կարող է նույնիսկ վնաս հարցել Հայաստանի ցանկացած այլ կազմակերպության։

Երեկ, մոտավորապես նույն ժամից, լին աշխատում նաեւ «Ազգի» հեռախոսները, իսկ մեր աշխատակիցը, որը եղել էր առողջապահության նախարարությունում, հայտնեց, որ ժամը 15-ին անջատված էին նախարարության բոլոր աշխատանքային հեռախոսները։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21

Բոննում նշվեց անկախության 7-րդ տարեդարձը

Սեղտեմբերի 21-ին, ժամը 18:20-ին, Բոննի հայտնի «Լա Ռեդուբ» հյուրատանում ՀՀ դեսպանությունն ընդունելություն էր կազմակերպել Հայաստանի Հանրապետության անկախության 7-րդ տարեդարձի առիթով։ Սրահը բազմամարդ էր, բազմաբեռ հյուրասակություն էր հավաքվել՝ Բոննում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ, գերմանացի հաղթական գործիչներ, հոգեւորականներ, մտավորականներ, արվեստագետներ, հայ համայնքի ակտիվ դեմքեր։ Գերմանիայում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանի տեղեկացմամբ, ներկա էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գունատանի, Կիպրոսի, Ռումինիայի, Խորվաթիայի, Սլովակիայի, Սլովենիայի, Ուկրաինայի, Ռուսաստանի, արաբական երկրներից տաների ներկայացուցիչներ։ «Ես մտածում էի երկու տոնակատարություն՝ մտակույթի օրեր, դրանից հետո տաս արագ Ազգային տոնը, կարող են մեկը մյուսին մի փոքր խանգարել, այդպես չեղավ եւ տաս հաճելի, լավ երեկո էր։ Քաղաքական շրջանակներից բարձ դեմքեր կային», շարունակեց դրն Ոսկանյանն ընդգծելով, թե իր համար տաս կարեւոր է, որ նրանք համագործակցելու առաջարկ են արել՝ մասնավորապես Բունդեսթագի նիստերակայացուցիչն առաջարկել է կազմակերպել խորհրդարանի նախագահի հաջորդ տարի նախատեսված այցը։

«Չեզ ի՞նչ տվեց անկախության 7 տարին», իմ հարցին ի դատասխան ՀՀ դեսպանն ասաց. «Չեմ կարծում, թե 7 տարին դիտի արձանագրվի իբրեւ հատուկ կետ։ Առաջին 1-2 տարին մենք արձանագրում էինք տոնական ոճերգներով եւ այլն։ Այսօր մեր երկիրն արդեն գոյություն ունեցող երկիր է, եւ դա ամենն օրվա աշխատանքն է։ Տարեդարձը միայն առիթ է տոնելու եւ ուրախանալու համար։ Բայց մնում է ամենն օրվա աշխատանքը, որ տարունակվում է»։

ՄԱՐԻԵՏԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բոնն

Նշվեց նաեւ Բեյրութում

Ըստ մեզ հասած լուրերի, երկուշաբթի օրը, սեղտեմբերի 21-ին, Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձը դատասած հանդիսությամբ եւ ընդունելությամբ նշվել է Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում։ Լիբանանի խորհրդարանի եւ կառավարության բազմաթիվ ներկայացուցիչներ, տեղի հայ համայնքի կրոնական, կուսակցական եւ մշակութենական ներկայացուցիչներ, օտարերկրյա դեսպաններ, գործարար մարդիկ եւ լրագրողներ ի դեմս դեսպան Արման Նավասարդյանի ներկայացրել են հայ ժողովրդին եւ հայոց դեսպանությանը ազգային տոնի առթիվ։ Տեղի հեռուստատեսային եւ այլ լրատվամիջոցներ դատասած արձագանք են տվել միջոցառմանը։

Իսկ Աբեմում չնշվեց...

Դուբայանի մայրաքաղաքից մեր ստացած տեղեկությունների համաձայն, Անկախության տոնն այս տարի դատասոնական ընդունելությամբ չի նշվել ՀՀ դեսպանության կողմից, դիտարարության եւ հարակից ծախսերի համար համադատասխան գումարներ չլինելու դատճառով։ Այնինչ ավանդական դարձած ընդունելությունը, այն էլ Հայաստանին բազմաթիվ առումներով դատճառակից մի երկրի մայրաքաղաքում, կարեւոր է հարաբերությունների ամրադնդման եւ, նույնիսկ, լոբբիինգի տեսակետից։ Մինչդեռ, դատելով այս կամ այն երկիր՝ երբեմն անկարեւոր համաժողովների մեկնող մեր դատվիրակությունների մեծաթիվ կազմից, թվում է դժվար չէր լինի մի քանի հազար դոլար վճարացնել Աբեմի դեսպանություն, որդեսզի կազմակերպվեր ավանդական ընդունելությունը։

Այս իրավիճակում, կարծում ենք, դիտ մխիթարական է Աբեմի մեր դեսպանության եւ անձամբ դեսպան Արման Կիրակոսյանի համար, Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձը առաջիկա հոկտեմբերի 1-ին Կիդրոսում, այդ երկրի անկախության օրվա հետ միասին նշելու վասաբ։ Եի կոսիայում կայանալիք այդ ընդունելությունը, ինչդես նախորդ տարիներին, կազմակերդվելու է, ինչդես տեղեկացրեց տեղի մեր բդքակիցը, կիդրոսի հայազգաղության հայթայթած միջոցներով։ Ուրեմն տեղն է նշելու նաեւ, որ Դուբայանի մեր առաջին մեծաթիվ գաղութը դեսք է օրինակ վերցներ մեկուկես հազարանոց կիդրահայությունից եւ գոնե ինքը հայթայթեր անհրաժեշտ գումարը՝ Աբեմում խուսափելու համար այդ բերացումից։ Ազգային արժանադատվությունը այդ էր դահանջում։

Բնաարկվեցին Ավանի համայնքի հարցերը

Ուրբաթ օրը, սեղտեմբերի 10-ին, ՀՌԱԿ Հանրապետական վարչության գրասենյակում իր հերթական ընդհանուր ժողովը գումարեց Ավանի համայնքի ՀՌԱԿ «Սնժել Ֆոլմասեան» ակումբը։

Ժողովին ներկա էին ՀՌԱԿ Վվ փոխատենադետ Համլետ Դալլաքյանը, գործիչ Գրիգոր Պետրոսյանը, ինչդես նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության Բոստոնի (ԱՄՆ) շրջանակի անդամ Դավիթ Ֆորոսյանը։

Օրակարգի հիմնական հարցը Հանրապետական վարչության շրջանակների ընդարկումն էր։ Այն ներկայացրեց ակումբի առենադետ Սվետլանա Փիրոսյանը։ Անդամները կարեւորելով բարձրացված հարցերը եւ արեցին առաջարկություններ։ Դրանցից հատկանշական էր փոխատենադետ (տնտեսագետ) Սերգուի Լեւսիսյանի տեսակետը, այն է տնտեսական գործում բարեփոխումների անհրաժեշտությունը, որին ուղեկից դետք է լինի նաեւ կուսակցությունը։ Այնուհետեւ նշություն ունեցողն անդրադարձավ փոքր բիզնեսի զարգացման խնդրին։ որդ կրեի նոր աշխատատեղերի բացում։ Նա տեսնց, որ դետք է վարել ճիշտ դետական հարկային, մաքսային եւ վարկային քաղաքականություն, այլապես մեր ժողովուրդը կմնա որդես օգնություն հայցող (ինչդիսին նրան դարձրին վերջին տարիներին)։

Քննարկման նյութ էր նաեւ համայնքի դդրոցներում տիրող ծանր իրավիճակը։ Համայնքում գործում են հատուկ նշանակության մի քանի գիտերդիկ դդրոցներ։ «Նոր ուսումնական տարի եւ հին հոգսեր» բնաբանով նյութ ունեցավ Լիանա Մանվելյանը։ Նա նշեց, որ դետական հովանավորության դակասի հետեւանքով դդրոցները հասել են ադեքալի վիճակի։

- դասագրքերի, սենդի, դեդորայի նվազագույն քանակ
- դդրոցների տնտեսի ոչ բարվոք վիճակ ծմեսնամուտի սեմին
- դդրոցների տնտեսի տարբ սանի տարանիգիենիկ նորմերի բացակայություն (տեղադրված աղբարկղներ եւ զոյացած աղբակույտեր)։

Քննարկվեցին ընթացիկ այլ հարցեր, որոնցից կարելի փաստաթուղթ ընդարկված հարցերի տարբ եւ ներկայացնել Ավանի բաղադեսարանի համադատասխան բաժիններ։

ՄԵՍՐՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Հրատարակախոսություն

Հեռուստաթերը հասունացման ճանապարհի՞ն

Ազգային (նախկինում՝ պետական) հեռուստատեսության առօրյայում սեպտեմբերի 21-ին արտակարգ իրադարձություն էր. խորհրդային եւ անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ազդարարվեց նոր հեռուստաշրջանի մեկնարկը՝ ավելի քան մեկ տասնյակ նոր հաղորդաշարերով: Ասել է թե՝ հեռուստադիտողը, որ ավելի ու ավելի էր օտարվում հայրենի հեռուստատեսությունից՝ ալիքների փոխարկիչն ավելի ու ավելի հազվադեպ պտտելով «դեպի Հայաստան», կարող է թարմ հայացք եւ փոփոխություններ քամի ակնկալել հաղորդումների դժգույն միօրինակության շրջանում: Սպասված եւ, կարծում եմ, շատերի համար հաճելի իրադարձություն էր մասնավորապես «Հայլուր» լրատվականի վերածնունդը, թեեւ ակնհայտ է, որ նոր «Հայլուրը» չի կարող եւ երեւի թե նպատակ էլ չունի կրկնել նախորդին, ինչպես նոր «Երկիրը» չէր կարող եւ չկրկնեց հին «Երկիր»-ին այն պարզ պատճառով, որ այլ են խմբագրակազմը, «հեսաթնդվող» խնդիրները եւ ռազմավարությունը. ժամանակը. ընդդիմադիր ծրագրի իմիջ վաստակած հաղորդումն անկասկած դժվարություններ կունենա պատշոնական անցուդարձերն ու տեսակետները ներկայացնող հաղորդման «ամոլուայում» հեռուստադիտողին նվաճելու հարցում, քանզի ընդդիմության դիրքերից հանդես գալն ավանդաբար առավել շահեկան է, քան իշխանամետության «դատապարտելի» կեցվածքը, եւ «Հայլուրից» լուրջ ջանքեր պիտի պահանջվեն առնվազն քաղաքական նկատառումներով կասեցված ծրագրի լեգենդը չցրելու համար:

Սակայն... «Հայլուրի» առաջին հաղորդումը, որ, ի հավելումն, տնական լինելու պատասխանատվության բեռն էր կրում, հիասթափեցնող էր, սկսած «մուտքի» տպավորիչ լինելուց հեռու տարբերանշանից, հաղորդավարուհու ձգված, մի քիչ վախվորած դեմքից (գուցե պատճառը դարձյալ մեկնարկի պատասխանատվությունն էր) եւ «Լրաբերի» կամ «Լուրերի» ոճը եւ մատուցման կերպը չգերազանցող ռեպորտաժներից: Հեռու եմ այն ենթադրությունից, թե «Հայլուրի» առաջին հաղորդումը ծրագրի բարձրակետը պիտի լիներ կամ էր: Ընդհակառակը, ուզում եմ հուսալ, որ ծրագիրը թափ հավաքելու ճանապարհին է եւ ոչ միայն իմ, այլեւ գործընկերներիս կարծիքով ոչ այնքան հաջող մեկնարկն «առաջին հացը, ինչ էլ որ անես, միշտ կուտ է գնում» հայտնի «դրության» դրսեւորումն է, եւ հաջողություն մաղթել ծրագրի հեղինակներին:

Եվ դարձյալ սակայն... «Ազգային» պարտավորեցնող կոչումն ստանձնելուց ի վեր, իրար հաջորդող տնօրենների «շերթին» հակառակ եւ անհասկանալի հետեւողականությամբ պետական հեռուստատեսությունը գնալով ապազգայնանում է: Արհեստական արեւմտականացման խորացող ախտանիշը խժռում է ազգայինի տարրը իրար հաջորդող, Ռուսաստանի եւ Արեւմուտքի հաղորդումները նմանակող հաղորդաշարերում: Արտացոլելով, թերեւս, Ազգային հեռուստատեսության «հայրերի» բարձր ճաշակը, հեռուստաէկրանից գրեթե ամբողջությամբ դուրս է մղվել հայկական երաժշտությունը, ժողովրդական եւ ազգագրական երգը մի տեսակ անկոչ հյուրի կարգավիճակով եւ հիմնականում մանկական միջոցառումների մակարդակով է «հայտնվում» հեռուստադիտողին, որը ժողովրդական երգի նկատմամբ իր հակումն ստիպված է «բավարարել» փողոցներում ու հարսանիքներում, տոնավաճառներում ու խնջույքներում բարգավաճող ռաբիսի միջոցով: Զանգվածային տեղեկատվության ո՞ր աստյանը, եթե ոչ Ազգային հեռուստատեսությունը, պետք է լավագույնս ընտրի եւ շահեկան մատուցմամբ ժողովրդին ներկայացնի, նույնիսկ պրոպագանդի հայկական երաժշտությունը: Թե՞ անկախ



նկատմամբ եւ շատ ավելի ինտենսիվ է օգտվում գովազդահոլովակների ծառայությունից, ինչը բնական է եւ բնականոն: Սակայն, հեռուստադիտողին ստիպելով կրկին եւ դարձյալ լսելու եւ դիտելու այդ «ընտրանին», հարկ է դրանց գոնե միջին մակարդակն ապահովել: Մինչդեռ, որքան էլ ցավալի է, եթե թարգմանաբար ներկայացվող գովազդներին դեռ կարելի է դիմանալ, ապա տեղական (հիմնականում «Շարմ» ընկերության) հոլովակները, չնչին բացառություններով (ինչպես օրինակ, «Գրանդ Տոբակո»-ի արտադրանքի գովազդը՝ «Մերն ուրիշ է» համոզիչ փաստարկով) նյարդեր են սղոցում եւ ոչ թե գովազդի, այլ հակագովազդի տպավորություն թողնում: Հիշեցնեմ ընդամենը «Երեւան Բյուզ» իբրեւ ճնարական ներկայացվող ֆիլմի հազվագյուտ գոեհիկ գովազդը, որի գագաթնակետը «Բերնիդ կիջնեմ» «խոստումնալից» արտահայտությունն է, որ, ի դեպ, մեծ հաջողություն ունի փոքրիկների շրջանում (նրանք հաճույքով կրկնում են այս հույժ «ռոմանտիկ» ֆրազը՝ վայելելով փողոցային ժարգոնի ողջ «համը») եւ «մատաղ սերնդի» ճաշակը ձեւավորում է հնարավոր ամենաանցանկալի ուղղությամբ: (Փառք Աստծո, որ հեռուստաթերն ազատվել է գոնե «Ես լավ տղա եմ», «Դավայ, դավայ» նույնպես հանրահայտ, թերեւս մտավոր հեշտամնացների համար նախատեսված «Մեր բակը» ֆիլմը գովազդող գլուխգործոցներից):

Հաջորդ խնդիրը, որի վրա ուզում եմ սեւեռել Ազգային հեռուստատեսության ղեկավարության ուշադրությունը, հաղորդավար-մեկնաբանների ընտրությունն է, որտեղ, թվում է, «ծախության (կամ աջության) մանկական հիվանդության» համաճարակ է սկսվել: Հեռուստաէկրանից անհետանում են հասուն ձայները: Պատանեկան տարիքին թերեւս վերջերս հրաժեշտ տված հաղորդավարհաղորդավարուհիները կամ մեկնաբան-մեկնաբանուհիները, որպես կանոն խոսում են մի տեսակ մանկական ձայնով, հայերեն բառերի ամենից հաճախ ոչ հայեցի շեշտադրումներով: Պատահական թվացող ընտրությամբ հաղորդումը վարելու պատվին արժանացած այդ երիտասարդներին պակասում է ոչ միայն արտիստիզմը, այլեւ մարդկանց իրազեկելու կարեւոր առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ կրթվածությունը՝ ոչ թե բարձրագույն կրթություն ստացած լինելու, այլ կենսափորձի եւ հասարակական-քաղաքական գործընթացները գնահատելու պահանջվող պատարն ունենալու առումով: Ուստի ամենալուրջ միտքն անգամ հաճախ դժվարությամբ է ընկալվում եւ հավաս չի ներշնչում հեռուստադիտողին, որը պարզապես թափ է տալիս ձեռքը հերթական անգամ հանգելով այն տխուր եզրակացության, թե հայկական հեռուստատեսությունը դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտի ռուսաստանյան հեռուստաալիքներին մերձենալու համար, եւ ապավինում հենց վերջիններիս:

Հեռու լինելով Ազգային հեռուստատեսության գործունեությունը համապարփակ վերլուծելու եւ գնահատելու, առավել եւս «դատավճիռ կարդալու» հավակնությունից, հասկանալով նաեւ կադրերի առկա «բանկի» հնարավորությունների սղությունը, հուսամ, որ հեռուստաթերում նշմարվող փոփոխությունների քանակին, այնուամենայնիվ, կփչի օգտակար (ռաբիսացումը եւ անհարկի գերարեւմտականացումը, ինչպես նաեւ «մանկականացումը» բացառելու) ուղղությամբ:

ԻՍԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռաֆֆի Հովհաննիսյանը պարզապես հրաժարական չտվեց՝ ահազանգ հնչեցրեց

Էլիսի թագավոր Ավգիասի ախոռներում աղբը կուտակվել էր 30 տարում: Մերոնք այդ ժամկետը կրճատեցին ուղիղ 22 տարով: Իրենց իշխանության առեն 8-րդ տարում նրանք ողջ երկիրը դարձրին անծայրածիր ավգյան ախոռ: Փետրվարյան իշխանազրկությանը հետեւած առաջին ոգեւորիչ շրջանում ժողովուրդն անհամբերության միեւնույն զգացումն ուներ՝ ապակայունության այս միջավայրում 5 տարի, 3 տարի, անգամ 1 տարի ապրել այլեւս հնարավոր չէր, ուստի շունչը պահած սպասում էր այն նորօրյա Հերակլեսին, որը կկարողանար շուտափույթ մաքրել այս լեռնակուտակ խայտառակությունը:

Յուրաքանչյուր հարազատ ու վստահելի անուն, որ հայտնվում է կառավարության կամ զանազան կազմակերպությունների կադրային ցուցակներում, հուսավառում է ժողովրդի երեւակայությունը, բազմապատկում համբերության նրա պաշարները, նա կրկին լցվում է լավատեսությամբ՝ զրկանքներին էլի կդիմանա, միայն թե՝ հների աղբը մաքրվի ու մեղավորներն արժանի հատույց ստանան: Բայց ավաղ՝ արդեն քանի ամիս ոգեւորությունը առժամանակյա բնույթ է կրում, որովհետեւ ամեն անգամ հաղթում է իրականության անողոքությունը՝ հիշական ախոռները անսասանելի են: Հոռետեսության հերթական առիթը տվեց Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ իր ցավալի հրաժարականով:

Շարախնդացողներն արդեն հասցրել են վայելել իրենց գնենարած ուրախությունը, հիասթափվածները՝ հայտնագործել մխիթարվելու փիլիսոփայությունը, բայց դեռ անհրաժեշտ է հասկանալ, թե ում համար էր ցավալի այս հրաժարականը եւ որը պետք է լինի նրա տրամաբանական մեկնությունը: Եզրակացությունս, որ կփորձեմ ներկայացնել ընթերցողի անաչառությանը, բացառապես սեփական ընկալումների արգասիք է, որովհետեւ իր դեմ սկսված չարության արշավի ողջ ընթացքում լռություն պահպանած Ռաֆֆի Հովհաննիսյանը լռում է նաեւ հիմա՝ հակառակորդներին այդկերպ ոչնչացնելով հանդերձ՝ իր համակիրներին էլ զրկելով դատողությունների փաստական հիմքից:

Ընդդիմադիր ինքնօծված հիշական մամուլի զազրաբանությունները պատասխանի չարժանացնելու նրա արդարացված կեցվածքը միշտ եւ բոլոր շրջանակներում չէ, որ ճիշտ է ընկալվում: Ովքեր քաջատեղյակ են, թե հանուն մի ավել պատառի խզմզվող այդ տողերի հեղինակները ինչ մակարդակի տեր են, լռությանը հավանություն են տալիս: Իսկ ովքեր միամտություն ունեն հավատալու, թե «Հայքի» ու «Առավոտի» էջերում դեռ հնարավոր են ազնվության առկայծումներ, զարմանքով, հաճախ էլ վրդովմունքով են վերաբերվում այդ լռությանը:

Բայց խնդրի էությունը չափազանց հեռու է իշխանադարձության մոլուցքի մեջ անհեթեթ հերյուրանքների շրջապտույտն ընկած հիշականներին ու նախանձորդներին չեզոքացնելու ցանկությունից: Դա չնչին տեղ ունի այն ողջ համապատկերում, որից հյուսվել ու ձեւավորվել է Ռաֆֆի Հովհաննիսյանի կերպարի ամբողջությունը: Այն մնում է բարձր ու անխարար եւ դա բոլորից լավ հասկանում են հենց բանդագուշանքով զբաղվողները: Իրոք, խնդիրը միանգամայն այլ է եւ հարուցում է բացահայտման կարոտ մի շարք հարցականներ: Դրանցից գլխավորին՝ հրաժարականի բուն պատճառին, կարծում եմ՝ կպատասխանի ինքը՝ պարոն Հովհաննիսյանը: Իսկ մյուսներն անմիջականորեն բխում են մեր հասարակության բարոյական ու նյութական շահերից, ուստի չպետք է նրան անտարբեր թողնեն:

Նախ պարտավոր ենք պարզել, թե առաջին հերթին ո՞ւմ համար պետք է ցավենք՝ այն մարդո՞ւ, ով բարեկեցիկ կյանքը թողած եկավ կիսավեր Հայաստան ու իր բոլոր կարողություններով, նվիրվածությամբ լծվեց նրա վերակերտման գործին, բայց ստիպված է միմյանց հետեւից ընդունել հուսախաբության բազում բաժակներ, թե՞ այն կառույցների, որոնք իրենց անկատարության ու աշխատակազմերի բարոյալքության պատճառով մատնվեցին բախտի քմահաճույքին: Ըստ իս՝ Ռաֆֆի-անհատը որեւէ կորուստ չի կրել: Հուսախաբություններն էլ, հուսանք, ամենակարճ ժամկետում ամոքվեն:

Ցավակցության արժանին այս հիվանդ երկիրն է, որը ապահինության մի քանի նշան ցույց տալուց հետո կրկին անձնատուր եղավ հին ախտերի հարուցիչների պաշարմանը:

Կարեկցության արժանին այս որոշակի պահին «Հայաստան» հիմնադրամն է:

Մոտ ապագան անդայման կբացահայտի, թե ի՞նչ նպատակի էր ստեղծված հիմնադրամը, որ այլեւս չի արժանանում ափյուռեհայ բարեգործների վստահությանը: Կիմանանք, թե ո՞րն էր նրա քաղաքականացվածության ճշգրիտ գինը՝ արդյոք ո՞չ նախկին նախագահի անվան հետ կապվող անօրինականությունները: Հավանաբար նաեւ կպարզվի, թե ներկա նախագահն ինչո՞ւ չաջակցեց Ռաֆֆի Հովհաննիսյանին, դրանով ակամա շարունակելով կատարված անօրինականությունները չբացահայտելու եւ դրանով իր բարձր վարկանիշը ամբոխի բերանում ծամոն դարձնելու անհեռատեսությունը: Երեւի թե կճշգրտվեն խոսակցությունները Սանուշակ Պետրոսյանի անբասիրության վկայագիր-ճերմակ աղտաքսի ու այլ հաճույքների վրա ծախսված գումարների մասին: Վերջապես՝ հայտնի կդառնա՝ հիմնադրամը գոյատեւելո՞ւ է, թե հիմնահատակ կոտորակելու է ափյուռքի ու Հայաստան-Արցախի հազիվհազ նորոգված երազանքները:

Թեեւ ով իմանա՝ հասարակության անհոգության պարագայում շատ հնարավոր է, որ ոչինչ էլ չիմանանք, որովհետեւ հիշական հմտությամբ ճարճատող դեղին գրիչները դժվար թե կամվին անձնատուր լինեն, նրանք դեռ կողավաղեն ու կաղականեն, դեռ կփորձեն ողջոր ջրում նեխած ձուկ բռնել: Նրանց ծառայությունները վարձատրող տերերի բոլոր հաշվարկները հիմնվում են ժողովրդի կարճ հիշողության, իրենց գործումներն ու մարդասպանությունները մոռացության մատնած լինելու փորձված հանգամանքների վրա: Դժբախտություն է, սակայն առայժմ նրանք չեն սխալվել: Ում եւ որքան ուզեցել՝ սեւացրել ու վարկաբեկել են, անդադար հագեցրել են իշխանատենչության իրենց վայրի ախորժակը, թերարժեքության իրենց բարդույթը բարդել են բոլոր ազնիվ հոգիների վրա: Իհարկե՝ շարունակելով ժողովրդից նորանոր պատառներ փախցնելը: Դա գերնոյատակ է: Այնպես որ՝ մեր սպասումները կարող են նաեւ չարդարանալ եւ կրկին կմնանք անտեղյակության ու հուսալքության գերին:

Որպեսզի դա չպատահի՝ պարտավոր ենք Ռաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականին վերաբերվել մեծագույն լրջությամբ: Հակված եմ այն գնահատել որպես տեղին հնչեցված ահազանգ: Ողբերգական մի երանգ կա այն իրողությունում, որ այս երկրում ազնիվ մարդիկ կարծես թե տեղ չունեն: Եթե դու ծնողներիդ մեծության ու անձնական արժանիքներիդ շնորհիվ ապահովված մարդ ես, փնտրված մասնագետ, խղճիդ վրա որեւէ բեռ չունես, հայության բացարձակ մեծամասնության սիրելին ես, լի ես եռանդով ու պայծառատեսությամբ՝ ուրեմն Հայաստանը քո տեղը չէ: Բայց այդ դեպքում ո՞ւմ կմնա երկիրը: Մեր այսօրվա մոլորությունների ակունքն այն չէ՞, որ մեկընդմիշտ չենք հասկանում նրանք, ովքեր մի անգամ արդեն խանությունից օտարվել են, վերադարձ չունեն: Նրանց վերադարձը միայն մի բան կնշանակի՝ ժողովրդի ուղղակի ու դաժան հաշվեհարդար: Սակայն քանի որ գնում ենք դեպի ժողովրդավարական ապագա, տեղին կլինի, եթե կատարված բացահայտման ամբողջ պատասխանատվությունը սանձնի արդարադատությունը՝ ի դեմս նախագահ Ռոբերտ Քոչարյանի:

Ի լուր նրա՝ ահա հնչել է Ռաֆֆի Հովհաննիսյանի ահազանգը: Ի՞նչ է կատարվել «Հայաստան» հիմնադրամում: Ի՞նչ գիտի Ռաֆֆի Հովհաննիսյանը, որ չգիտի նախագահը, չգիտի ժողովուրդը: Հրաժարականի փաստն ընդամենը այս երկու կիզակետն է բովանդակում: Եթե դրանք բաղված են գորդյան հանգույցում, սրի մի հարված են պահանջում, եթե խճողված են այլ հանգույցներում՝ մանրագնին հետազոտության կարիք ունեն: Երկու դեպքում էլ լուծման բանալին Ռոբերտ Քոչարյանի ձեռքում է: Հանրությունը մի անգամ էլ կարող է զինվել սպասման համբերությամբ:

ՀՐԱՉՈՒՀԻ ՓԱԼՄԱԴՈՒՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Միջազգային

Իրանի պահպանողականների եւ ԱՄՆ-ի հանրապետականների հաջողություններն ընդդեմ այդ երկրների գործադիր իշխանությունների

Սեպտեմբերի 21-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանի շրջանակներում, կազմակերպության գլխավոր քարտուղար Կոֆի Անանի նախաձեռնությամբ եւ գլխավորությամբ, տեղի ունեցավ Աֆղանստանի վերջին իրադարձություններին նվիրված համաժողով 6+2 երկրների՝ Աֆղանստանին սահմանակից Իրանի ԱԳ փոխնախարար Ջավադ Զարիֆի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Պակիստանի, Հնդկաստանի, Ռուսաստանի ԱԳ նախարարների եւ ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի մասնակցությամբ: Համաժողովին, որը կազմակերպված էր ԱԳ նախարարների մակարդակով, պետք է մասնակցեր նաեւ Իրանի ԱԳ նախարարը, սակայն միայն վերջին րոպեին հայտնի դարձավ, որ Թեհրանի մասնակցությունը ԱԳ փոխնախարարի մակարդակով է լինելու: Հանգամանք, որը հավանաբար պայմանավորված էր Իրանի ներքին իրավիճակով՝ սահմանադիր ժողովի ընտրություններով, քանզի վերջերս պահպանողականները, որոնք նաեւ խիստ դեմ են ԱՄՆ-Իրան փոխհարաբերությունների բարելավմանը, գործի դնելով իրենց տնօրինության տակ գտնվող բազմաթիվ գործուն լծակներ, ճնշում են գործադրում նախագահ Խաթամիի կառավարության վրա: Ստեղծված պայմաններում Իրանի ԱԳ նախարարի մասնակցությունն ամենայն հավանականությամբ պահպանողականները որակելու էին որպես ԱՄՆ պետքարտուղարի հետ հանդիպում:

Կոֆի Անանն իր ելույթում նշեց, որ միջազգային հանրությունը պետք է լուրջ քայլեր գործադրի Աֆղանստանում իրավիճակը վերահսկելի դարձնելու ուղղությամբ: Հանդիպման օրակարգի գլխավոր հարցը Իրան-«Թալիբան» փոխհարաբերություններում ստեղծված ճգնաժամն է, որի առիթով Զարիֆը նշեց, որ Պակիստանը շարունակում է աջակցել թալիբներին, Աֆղանստանում սպանվել են իրանցի դիվանագետները, պատանդ են վերցվել Իրանի քաղաքացիներ, այսուհանդերձ, Թեհրանը հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու ուղղությամբ ջանք չի խնայելու: Միաժամանակ Իրանի ԱԳ փոխնախարարն ընդգծել է, որ Թեհրանը մտադիր չէ այս առնչությամբ որեւէ ժամանակացույց նշանակել: Իրանի նախագահ Մոհամեդ Խաթամին, որը նույն օրը ելույթ ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում, անդրադառնալով աֆղանական խնդրին, շեշտը դրեց քաղաքական լուծման վրա, պահանջեց պատժել իրանցի դիվանագետներին սպանողներին, ընդգծեց, որ Աֆղանստանի ճգնաժամը հնարավոր չէ վերացնել ռազմական ճանապարհով: Նա կրկին շեշտեց Թեհրանի տեսակետն առ այն, որ անհրաժեշտ է Աֆղանստանում հաստատել բոլոր շահագրգիռ ուժերի մասնակցությամբ մի իշխանություն: Ի դեպ, Իրանը նախագահի մակարդակով ՄԱԿ-ում ելույթ էր ունեցել 12 տարի առաջ, երբ Իրանում նախագահում էր այժմյան առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին: Համաժողովը որոշեց ՄԱԿ-ի Աֆղանստանում հատուկ ներկայացուցիչ Իբրահիմիի գլխավորությամբ իրավիճակն ուսումնասիրելու նպատակով հանձնախումբ կազմել այդ երկիր:

Վերադառնալով խնդրո առարկա համաժողովի նշանակությանը, հարկ է նշել, որ այն կարեւորվում եւ միջազգային ՁԼՄ-ների օրակարգային հարց է դարձել այլ՝ ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի եւ Իրանի ԱԳ նախարար Քամալ Խարազիի՝ համաժողովի շրջանակում ենթադրվող հանդիպման պատճառով, քանզի 1979 թ. նոյեմբերից ի վեր, երբ խզվեցին ԱՄՆ-Իրան դիվանագիտական փոխհարաբերությունները, փաստորեն երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների միջեւ որեւէ հանդիպում տեղի չի ունեցել: Թեեւ հանդիպումն առավելապես խորհրդանշական բնույթ էր կրելու, սակայն ԱՄՆ եւ միջազգային փորձագետներն ու քաղաքական դիտորդները հույս էին հայտնում, որ այն մեծապես կնպաստի երկու երկրների փոխհարաբերություններում առկա բարելավմանը: Ավելին՝ կան տեսակետներ, որոնց համաձայն Կոֆի Անանի հիշյալ նախաձեռնությունը նաեւ նման հանդիպում իրականացնելու նպատակ էր հետապնդում: Թերեւս դա էր պատճառը, որ ԱՄՆ-Իրան փոխհարաբերությունների բարելավմանը կտրականապես դեմ Կոնգրեսը նշված հանդիպման ենթադրվող դրական արդյունքները չեզոքացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառման դիմեց: Նշենք նաեւ, որ եթե Սպիտակ տունը, պետքարտուղարությունը՝ հանուն Միջին Արեւելքում ԱՄՆ-ի շահերի, խիստ շահագրգիռ են ԱՄՆ-Իրան փոխհարաբերությունների շուտափույթ բնականոնացմամբ, ապա Իսրայելի շահերի անվերապահ պաշտպան, հետեւաբար հակաիրանական դիրքորոշմամբ Կոնգրեսը ջանք չի խնայում խոչընդոտելու այդ ոլորտում ցանկացած դրական դրսեւորում: Մյուս կողմից, ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի դիրքերը խիստ թուլացել են Կոնգրեսի համեմատությամբ՝ կազմված իր եւ Մոնիկա Լեւինսկու սիրային պատմության հետ: Պատմություն, որի հերոսուհուն Իսրայելի կրոնական որոշ շրջանակներ համեմատում են Հին կտակարանի հրեաների սիրված առասպելներից մեկի հերոսուհու՝ Եսթերի հետ: Նման պայմաններում, Իսրայելի ծայրահեղ աջերի եւ վարչապետ Նաթանյահուի անվերապահ աջակիցներ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում՝ Նյու Յորքից Գերի Հայկրմանի եւ Ֆլորիդայից Սայդինա Լայթ Թայնընթի, ինչպես նաեւ Վաշինգտոնում «Սոջահեդինը խալղ» (Հանուն ժողովրդի մարտնչողներ) գրասենյակի նախաձեռնությամբ եւ ջանքերով (BBC, 1998 թ. սեպտեմբերի 17-ին) Կոնգրեսի 430 անդամներից 220-ի ստորագրությամբ սեպտեմբերի 16-ին գործադիր իշխանությանն ուղղված հրապարակվեց մի հայտարարություն, որտեղ մասնավորապես նշվում էր, որ Իրանի չարագործ վարչակարգի սանձահարման ամենաարդյունավետ քաղաքականությունը փոխզիջման չգնալն է՝ ընդգծելով, որ Իրանի հետ փոխհարաբերությունների բարելավումը Վաշինգտոնի կողմից հիմար քայլ կլինի: Սույն հայտարարությամբ նախագահ Քլինթոնից պահանջվում է ոչ միայն խուսափել Թեհրանի նկատմամբ փոխզիջման որեւէ քայլ կատարելուց, այլեւ անհրաժեշտ է համարվում Իրանի վրա ճնշումը շարունակել մինչեւ վերջինիս անվերապահ հանձնվելը: Կոնգրեսականները հայտարարությամբ Քլինթոնից պահանջել են նաեւ, որ վերջինս «Սոջահեդինը խալղ» կազմակերպության անունը հանի ահաբեկչական կազմակերպությունների ցուցակից: Այս առնչությամբ ավելացնենք, որ 1997 թ. հոկտեմբերի 8-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակեց ահաբեկչական խմբերի ու կազմակերպությունների ցանկը շուրջ 30 անուն. Ցուցակում ընդգրկված է նաեւ արտերկրում գտնվող Իրանի զինված ընդդիմադիր «Սոջահեդինը խալղ» կազմակերպությունը, որի կենտրոնը տեղակայված է Իրաքի՝ Իրանին սահմանամերձ շրջանում: Այս առումով ուշագրավ է նաեւ այն, որ կոնգրեսականները նախագահին նման պահանջ են ներկայացնում այժմ, երբ հիշյալ կազմակերպությունը վերջին ամիսներին ակնհայտորեն ակտիվացրել է Իրանում ահաբեկչական գործունեությունը: 1998 թ. հուլիսի 3-ին «Սոջահեդինը խալղի» միաժամանակ մի քանի ահաբեկչական գործողությունների զոհ դարձան անմեղ մարդիկ, այդ թվում՝ մեկ հայ: ԱՄՆ կառավարությունը դիմելով աննախադեպ քայլի, հուլիսի 4-ին դատապարտելով «Սոջահեդինը խալղի» ահաբեկչությունները, ցավակցեց զոհերի հարազատներին: Իսկ սեպտեմբերի 7-ին հիշյալ կազմակերպության ահաբեկչական գործողության զոհը դարձավ Իրանի բանտերի նախկին պետ Լաջե Վարդին: Նման պայմաններում մինչդեռ Կոնգրեսականները խնդրո առարկա հայտարարությամբ Թեհրանին մեղադրում են ահաբեկչությունը հովանավորելու մեջ, նախագահ Քլինթոնը սեպտեմբերի 21-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանի բացմանն արտասանած ճառում Իրանին համարեց ահաբեկչության զոհ, ինչը դրական գնահատականի արժանացավ Իրանի նախագահ Խաթամիի կողմից սեպտեմբերի 22-ի իր մամուլի ասուլիսում:

Թերեւս զուտ քաղաքական նպատակներ հետապնդող կոնգրեսականների այդ քայլը ոչ միայն պայմանավորված էր Իսրայելի շահերի պաշտպանությամբ, այլեւ ԱՄՆ-ում առաջիկա ընտրություններով, քանզի մեծ հավանականությամբ հայտարարությունը ստորագրող կոնգրեսականների մեծամասնության տեղեկություններն Իրանի վերաբերյալ խիստ սահմանափակ են եւ դրա զարթոնք նախագահ Քլինթոնի վրա ճնշումը մեծացնելու նպատակով են ստորագրել հայտարարությունը:

ԱՄՆ-ում եւ Իրանում երկու երկրների փոխհարաբերությունների բնականոնացման հակառակորդներին թերեւս հաջողվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանի առիթով ԱՄՆ-Իրան փոխհարաբերությունների ոլորտում ակնկալվող լուրջ քայլերը կասեցնել:

ԷԴՈՒԱՐԴ ԲԵԼԱՍՅԱՆ

Հանրապետական հայուհին Կալիֆոռնիայի նահանգապետարանում

Լիզա էնն Գալուստյանը չորս տարի առաջ սկսեց զբաղվել քաղաքականությամբ: Հուլիսին Կալիֆոռնիայի նահանգապետ Փիթ Վիլսոնը Գալուստյանին նշանակեց իր կաբինետի քարտուղարի պաշտոնում: Այժմ Հարավային Կալիֆոռնիայում ծնված 34-ամյա կինն ամեն ինչից զատ վերահսկում է կառավարության առողջապահության ու կրթության մասնաճյուղերը: Նրա պարտականությունների մեջ մտնում է վերահսկել նահանգապետարանի վարած քաղաքականությունն առողջապահական եւ կրթական հարցերի վերաբերյալ եւ ծագած խնդիրների լուծումներ փնտրել:

«Շատ գոհ եմ, որ բախտ է վիճակվել աշխատել հենց այս ասպարեզում եւ մարդկանց հետ, որոնք, իմ կարծիքով, շատ լավն են», ասում է Գալուստյանը: Սա նահանգապետարանում Գալուստյանի վարած երկրորդ պաշտոնն է: 1996-ի հոկտեմբերին նա նշանակվեց Վիլսոնի կաբինետի լրատվական քարտուղար: Այդ պաշտոնում նա տմնեց երկու տարի՝ երկար ժամեր ու բազում շաբաթ-կիրակիներ աշխատանքի մեջ: «Երկրորդ պաշտոնս հնարավորություն տվեց նահանգապետարանում ծառայելու տարբեր ասպարեզներում եւ ներկայանալ ամենապատվավոր կողմերից», ասում է Գալուստյանը:

Նա ծնվել է Նորթ Հիլզում (Կալիֆոռնիա): Գալուստյանի տատիկը, մայրն ու երկու քույրերն այսօր էլ ապրում են Լոս Անջելեսի շրջակայքում ու նա չի բացառում, որ կարող է հաջորդ տարի վերադառնալ նրանց մոտ: Այս տարի լրանում է Վիլսոնի կաբինետի ժամանակը, անցկացվելու են նոր ընտրություններ: Գալուստյանն ասում է, որ դեռ չի որոշել, թե որտեղ կաշխատի դրանից հետո:

Չի բացառում, որ նա նորից կսկսի զբաղվել հայ համայնքի ներքին կյանքով: Ուսանողական տարիներին Գալուստյանը մասնակցել է Հայկական եկեղեցու երիտասարդական կազմակերպության գործերին: 1982-86 թթ. ծառայել է որպես նախագահ, փոխնախագահ, քարտուղար եւ խորհրդատու: 1986-ին նա բակալավրի դիպլոմով ավարտել է Փի Բեթա Կաппայի փիլիսոփայության ֆակուլտետը: Մագիստրոսի կոչում ստացել է 1993-ին: Դեռ ուսանող էր, որ նախկին նահանգապետ Ջորջ Դոմեջյանն առաջին անգամ որոշեց քվեարկվել: Ընտրելիս նա ներկայացավ որպես հանրապետական ու ընտրեց Դոմեջյանին: Այդ օրից հանրապետական էլ մնաց: Շատերը նույնիսկ խորհուրդ են տալիս նրան հաջորդ ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը: «Մարդիկ ինձ հարցնում են արդյոք երբեւէ կդնե՞մ թեկնածությունս, սակայն մոտակա պլաններ չունեմ: Նույնիսկ մոտ ապագայում՝ չեմ կարծում»: Իսկական քաղաքական գործչի խոսքեր են:

ԱԻՄ-ից թարգմանեց
ՌՈՒԶԱՆ ԱԶԻԶՅԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏ

«Յոթնյակի» երկրները մտադիր են «շատ օգնության» հիմնադրամ ստեղծել

ԼՈՆԴՈՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: «Յոթնյակի» երկրները մտադիր են հատուկ հիմնադրամ ստեղծել ներկայումս առավել ֆինանսական դժվարություններ կրող պետություններին շատ օգնություն ցույց տալու համար: Այդ միջոցների ծավալը կկազմի 50-120 մլրդ դոլար: Այդ մասին հաղորդել է բրիտանական մամուլը՝ վկայակոչելով Արժույթի միջազգային հիմնադրամի միջոցները: Դրանց առյուծի բաժինը՝ շուրջ 50 մլրդ դոլար, կտրամադրվի Բրազիլիային՝ օտարերկրյա կապիտալների արտահոսքը կանգնեցնելու եւ ազգային արժույթն ամրապնդելու համար, մնացած 70 մլրդ դոլարը նախատեսվում է հատկացնել ճգնաժամ ապրող մյուս պետություններին:

ԱՄՆ-ը Իսրայելին կմատակարարի 5 մլրդ դոլարի F-16 եւ F-15 կործանիչներ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը Կոնգրեսին տեղեկացրել է Իսրայելին 60 F-16 եւ 30 F-15 կործանիչներ վաճառելու իր որոշման մասին: Դրանց մեծ մասը հանդերձված է փոքր բարձրության նավարկության սարքերով եւ գիշերային տեսանելիության համակարգերով, երեքշաբթի օրը հայտարարել է Պենտագոնի ներկայացուցիչը: Գործարքների ընդհանուր գումարը կազմում է 5 մլրդ դոլար: «Առաջարկված գործարքը կնպաստի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության եւ ազգային անվտանգության շահերին, քանի որ կօգնի բարձրացնել բարեկամ պետության անվտանգությունը, որը եղել եւ մնում է Մերձավոր Արեւելքում քաղաքական կայունության ու տնտեսական առաջընթացի կարեւոր ուժը», ասվում է Պենտագոնի այդ առնչությամբ տարածված հայտարարության մեջ: ԱՄՆ-ը Իսրայելին տարեկան 1,8 մլրդ դոլարի ռազմական աջակցություն է ցուցաբերում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Պետրոս, վազն էկուր ինչմե...

Ազնիվ Հրաչյա

Այն անուններ, որ դառնում են այդ անունը կրող անհատի էության լիակատար բացահայտիչը: Ամեն անգամ, երբ լսում եւ կամ հոլովում ենք դերասանուհի Ազնիվ Հրաչյայի անունը, մեր հայացքը ինքնաբերաբար ուղղվում է հայ թատրոնի երկնակամարին, ուր անսպասելի ողողողում են առաջին կարգի մեծությունները: Այս մեծություններից էր Ազնիվ Հրաչյան: Ժամանակակիցների վկայությամբ արեւի օրերի նման տաք է եղել նրա արվեստը, որ կարճատեւ մի միջոցի ջերմացրել է հանդիսատեսների սրտերն ու անցել հետնորդներին նակին կատարյալ նորարար դերասանուհին: Նրա գեղագիտական հավատամքի հիմնախարերն են եղել հույզն ու ադրումը, անմնացորդ լինելիությունը, բնականն ու հավատին եւ ոչ ցուցադրականը:

Ազնիվ Հրաչյան օժտված է եղել եւ կազմակերպչական տաղանդով ավելի, քան հայ բեմի մեծ դերասանուհիներից որեւէ մեկը: 1878-79 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին նա ստեղծում է իր թատերախումբը, կազմակերպում ներկայացումներ Ադրիանապոլսում՝ իր իսկ բեմադրություններում խաղալով գլխավոր դերերը: Ազնիվ Հրաչյայի

տաղանդի ծաղկումը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսում: Ասես չգրված մի օրենքափություն լինի, որ Բոսֆորի հայության ընտրյալներից ելած մեծ դերասաններ Պ. Ադամյանը, Սիրանույշը, Վ. Փափազյանը եւ այլք, իրենց արհեստական կարողությունների լիակատար բացահայտմանը հասել են կոստանդնուպոլսահայ բեմերում: Նույնը եւ Ազնիվ Հրաչյայի պարագայում: 1881-ին դերասանուհուն հրավիրեցին Թիֆլիս, ուր միայն մեկ թատերաշրջան մնաց: Այս կարճատեւ միջոցին հանդիսատեսին ներկայացավ իր բազմաբնույթ դերերով՝ Կատրին Հովարդ, Լուկրեցիա, Ադրին Լեկուվրեր, Բեատրիչե, Ֆույր Թերեզա եւ վերջապես, Մարգարիտ Գոտիե Դյումա որդու «Քամելիազարդ տիկինը» դրամայում, մեծ դերասանուհիների նախապատվելի դերերից մեկը: Նույն այդ թատրաշրջանում Ա. Հրաչյան ծանոթացավ եւ մի քանի դերեր եւս՝ Պորցիա (Շեքսպիր «Վենետիկի վաճառականը»), Ժաննա դը Արկ (Շիլլեր «Օրլեանի կույսը»), Նինա (Լերմոնտով «Դիմակահանդես»), Սոֆիա (Ա. Գրիբոյեդով «Խելքից դժուռիաս»), Մարգարիտ (Գ. Սունդուկյան «Ամուսիններ») եւ Սուրացանի «Ուզանը»:

Անհավատալի կարող է թվալ մի քանի ամիսների ընթացքում այսքան դերեր խաղալը: Որքան ուժ, որքան ավյուն է պետք կերտելու համար հոգեբանական այս բարդ դերերի շարանը: Գրավիչ վկայությունների համաձայն, Ազնիվ Հրաչյան իր բեմական կերպարներով ցնցել է թատերասեր հասարակությանը, դարձել դրաստամուտ: Ավա՛ղ, երկար չի տեւել դերասանուհու գործունեությունը Թիֆլիսում: Կոկորդի հիվանդությունը, ընտանեկան հանգամանքները սեղմեցին դերասանուհուն վերադառնալ իր ծննդավայրը: Շկանեցավ մասնակցել թուրքական ներկայացումներին: բարվոք համարեց առժամ հրաժարվել բեմից: Եվ այդ դադարը ձգվեց ավելի քան մեկ տասնամյակ: Ա. Հրաչյային կրկին հրավիրեցին Կովկաս: Վարանումով ընդունեց դերասանուհին առաջարկությունը եւ նորից եկավ Կովկաս: 1893 թ. դերասանուհին նորից բեմ ելավ, ելավ վախով ու սարսուռով: Կկարողանա՞ արդյոք նախկին ուժով հրդեհել հանդիսատեսին: Թատրոնի տարեգրությունը տակավին չի արձանագրել, որ որեւէ մեկ դերասան տասնամյա ընդմիջումից հետո կարողանա վերսին կանգնել իր արվեստի երբեմնի պատվանդանին: Եվ ով զարմանք: Ա. Հրաչյան կարողացավ բարձրանալ իր փառքի մի նոր աստիճանի, եւ թատերասեր մարդիկ աղօթահար հիացմունքով կանգնեցին նրա դիմաց: Այս անգամ դերասանուհին ներկայացավ հանդիսատեսին իր դերացանկի ամենից ծանր ու դժվարին կերպարներից մեկով՝ Ժորժ Օնեի «Դարբնոցատեսը» պիեսի հերոսուհու՝ Կլարա դը Բոլիոյի դերակատարումով՝ անցնելով իր արվեստին անծանոթ մի սահմանագիծ եւս: «Դեմք չէ, այլ անեզր աշխարհ, գրել է թերթը, անհուն ծով, ուր մարդկային կրքերն ալիքների նման իրար մղում եւ իրար փշրում են»: Քույր Թերեզայի դերակատարումն ավելի հեռուն տարավ դերասանուհուն, իսկ Մարգարիտ Գոտիեի կերպարը գնահատելու համար հնուս գրիչներն անգամ խոստովանեցին, որ բառեր չեն գտնում գնահատանքի եւ կոչեցին դերասանուհուն մի գեղեցիկ լեգենդ: Այս դերակատարության առթիվ 1894 թ. «Բակինսկի վեղեմոս» թերթը գրել է. «Տիկին Հրաչյան այն աստիճան հանճարեղորեն կերտում է իր դերը, որ հանդիսատեսները բոլորովին մոռացել էին, թե արդյոք իրենք թատրոնի՞ մեջ են, թե՞ իրապես Մարգարիտ Գոտիեի սալոնում: Այդպիսի կերպար մենք դեռ չենք տեսել ռուսական բեմերում... երբ բնությունն է խոսում, ճենադաշի գրիչն անզոր է»:

Ազնիվ Հրաչյայի արվեստը բարձր են գնահատել հայ մտավորականները՝ Գ. Արծրունին, Հովհ. Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն եւ այլք:

Սակայն, այս անգամ էլ կարճ եղավ դերասանուհու բեմական կյանքը: Կոկորդի առաջացող հիվանդությունը կասեցրեց Հրաչյայի սլացքը եւ նա առմիշտ իջավ բեմից, երբ ընդամենը քառասունմեկ տարեկան էր: Այս նույն տարիքում կյանքին հրաժեշտ տվեց հանճարեղ Պ. Ադամյանը: Ճակատագրի որոգայթ՝ զուգադիպություն: Ու թեեւ Ա. Հրաչյան այլեւս բեմ չբարձրացավ, բայց մնաց թատրոնում իբրեւ իմաստուն խորհրդատու, ուսուցչապետուհի նոր եկողների համար, եղավ նաեւ բեմադրիչ: Հովհ. Թումանյանի խորհրդով գրեց «Իր հուշ-մտորումները, որոնք տպագրվեցին նաեւ Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսում, իսկ 1909 թ. Փարիզում՝ առանձին գրքույկով: Ա. Հրաչյայի արվեստում բեկվեցին իտալական, ֆրանսիական, ռուսական թատերարվեստների լավագույն ավանդները, խաչաձեւվեցին ազգային, զուտ հայկական ավանդներին գոյացնելով այն ինքնատիպ ու անկրկնելին, որ եղավ Ա. Հրաչյայի մեծ արվեստը:

Դերասանուհին վախճանվեց կոկորդի հյուծախից 67 տարեկանում եւ թաղվեց Դիլիջանի գերեզմանոցում: Եվ հիմա, այսքան տարիներ հետո, դերասանուհու հիշատակի արժանի խնկարկումը կլինի, եթե դերասանուհու աճյունի մասունքները բերվեն Երեւան եւ հողին հանձնվեն այն պանթեոնում, ուր հանգչում են մեր մշակույթի մեծությունները:

ՀԱՍԿԱՆԻ ՊԱՍՏԱՄԱՆ

Ս. ԷՖՄՐԱՅԻՆ

Վազգեն Առաջինի յուսեղեն հիշատակին

Հովհաննես Պատրիկյանի եւ Զոյա Գալստյանի աշխատասիրությամբ ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառի հովանավորությամբ Ս. Էջմիածինը լույս է ընծայել երջանկահիշատակ Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի ծննդյան 90-ամյակին նվիրված «Ոգեղեն կյանք» ուշագրավ գրքույկը: Երանում տեղ են գտել Վազգեն Առաջինի հետ հեղինակների տարբեր տարիներին ու տարբեր առիթներով ունեցած զրույցների պատառիկները, հոդվածներ հանգուցյալ կաթողիկոսի ելույթներից, որոնք երբեւէ հրատարակված չեն եղել եւ այս առումով արդեն իսկ անգնահատելի ճանաչողական արժեք են ներկայացնում: Վազգեն Առաջին Վեհափառի լուսեղեն հիշատակին մատուցված այս հարգանքի տուրքը, այս հիրավի եզակի գրքույկը կարդալուց հետո ավելի է մեծանում բոլոր նրանց կսկիծը, ովքեր հանգուցյալ կաթողիկոսին ունեին եւ ունեն իրենց սրտերում՝ ինչպիսի՞ մեծություն կորցրինք... Խորին ընտրահակություն Գարեգին Վեհափառին՝ գիրքը հովանավորելու եւ հեղինակներին՝ այսպիսի մի աշխատասիրություն ընթերցողի սեղանին դնելու համար:

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Հայ դասականների թարգմանություններն իտալերեն

Իտալիայի հրատարակչական հրատարակի վրա վերջին տարիներին մեծ թիվ են կազմել հայոց պատմությանը, գրականությանը եւ մշակույթին նվիրված ուսումնասիրությունները: Դրանցից նիրագույնների մասին է հաղորդում Պո-Արաֆ մշակութային ընկերակցության երթարերականը: Պո-Արաֆի նորակազմ «Հայագիտական բաժնի» հովանավորությամբ հիմնվել են երկու նոր մատենաշարեր. առաջին մատենաշարը կոչվում է «Armeniaca Italica»: Հրատարակումները պայմանավորված չեն որոշակի հրատարակչատնով եւ կարող են մաս կազմել ցանկացած այլ շարքի: Այս շարքից վերջերս լույս են տեսել «Ad limina Italiae», «Pawlos Buzand. Storia degli Armeni» եւ «The Armenian Way to Modernity» գրքերը: Առաջինը երգագրություն է Իտալիայում հայ վանականների եւ հոգեւորականների հետ (խմբագիրն է Պողոս Լեւոն Մեհիյանը): Երկրորդը Փավստոս Բուզանդի հայերի ստեղծագործությունն է Մարիո Բաչիի եւ Լորիս Գինս Նոյեսսիի թարգմանությամբ (խմբագիր՝ Գաբրիելլա Ուլուհոգյան), իսկ երրորդը փորձ է հաստատելու հայկական իմքնությունն ավանդությունների, նորարարությունների եւ առանձնահատկությունների համեմատությունների մեջ: Երկրորդ մատենաշարը կոչվում է «Carte armene» եւ պատկանում է «Guerini e Associati» հրատարակչությանը: Շարքի վարիչն է Հ. Լ. Մեհիյանը: Լույս է տեսել առաջին հատորը, որ Դավիթ Բեկի պատմության իտալերեն թարգմանությունն է՝ կատարված Ալդո Ֆերրարիեի կողմից:

Այս երկու շարքերից դուրս տարվա մեծագույն նորույթը, ըստ երթարերականի, կարելի է համարել «Հայ բանաստեղծության հատընտիր» Հ. Լ. Մեհիյանի խմբագրությամբ՝ «Երգ Հայաստանի» վերնագրով: Ընդգրկում է Վահագնից մինչեւ Ջահրաս ընկած ժամանակաշրջանի նշանավոր դեմքերի ստեղծագործությունները: Թարգմանությունները կատարել են Հ. Լ. Մեհիյանը, Անտոնիա Արալանը, Պաոլա Լիսոնյանը, Գաբրիելլա Ուլուհոգյանը եւ Ջուսեպ Տրայինան: Լույս է ընծայել «In forma di Parole» հրատարակչությունը:

Այս կողմից, Կիկայոն հրատարակչությունը վերջին տարիներին ընթերցողների սեղանին է դրել Գրիգոր Նարեկացու, Ներսես Լամբրոնացու, Եղիշեի եւ Եզնիկ Կողբացու գլուխգործոցների թարգմանություններն իրենց ներածականներով եւ ծանոթագրություններով:

Ն. Ս.

ԴՊՐՈՑ

Երկ չլիներ ԴԱՎ-ը

Եթե 1997 թ. տվյալներով աշխարհում 30 մլն ԴԱՎ-ի (դիմադրողականության անկման վարակ) վարակակիր լինեին, իսկ Հայաստանում վարակակիրների թիվը չհասներ 73-ի, արդա հավանաբար ոչ կրթության եւ գիտության, ո՛չ էլ առողջապահության նախարարների մեղով չէր անցնի այս ուսումնական տարվանից 8-10-րդ դասարաններում «դավագիտության» դասընթացներ մտցնել եւ երիտասարդներին հասանելի (ռեբուսների, խաղի) միջոցներով սեռական կյանքին վերաբերող գիտելիքներ մատուցել: Բայց քանի որ օրեցօր տարածվող եւ սոդոմելիի պես մեր գլխին կախված, անհաղթահարելի թվացող թշրաճոլության եւ մարմնավաճառության դեմ այլեւս անզոր ենք այլ փակել՝ ուստի պետք է «լավ է ուշ, քան երբեք» սկզբունքով առաջնորդվել եւ անհապաղ մտածել մեր պատանիների սեռական կուլտուրան բարձրացնելու մասին: Վերջապես գիտակցեցինք, որ ինֆեկցիոն հիվանդությունները կանխելուց ոչ պակաս առաջնային եւ կարեւոր խնդիրներ էլ կան առողջապահության ոլորտում, եւ այս դեպքում ֆինանսավորման բացակայությունը ո՛չ մեր դեռահասների անգիտությունը կարող է արդարացնել, ոչ էլ կանխահաս աղեից փրկել: Ճեղքեց ուշ, բայց գիտակցեցինք նաեւ, որ ԴԱՎ-ով վարակվելու հարցում մեր պատեհական ավանդությունն էլ չեն օգնում հեռու մնալ (գեթ այս հարցում) միջազգային չափանիշներից: Մինչ քանի տարի շարունակ մեր կրթության եւ առողջապահության նախարարությունները համաձեռ գլուխ էին ջարդում, թե երեխաներին սեռական կյանքին եւ դաստիարակությանը վերաբերող ինչպիսի գիտելիքներ եւ ոնց մատուցեն, որպեսզի հոնքը ոնքին տեղ այլն չ՝ չիանեն (նամուսով ազգ ենք, չէ՞), մեր երեխաները մեր աչքի առաջ կամ մեզնից թաքուն զգայացունց ֆիլմեր էին դիտում եւ սեռական կյանքի հանրագիտարաններ թերթում: Իսկ ասենք Ա-ռեւմուտքում, որին այդպես հեւիհեւ ձգտում ենք նմանվել, սեռական դաստիարակության դասընթացներ միջին դասարաններից են սկսում ուսումնասիրել: Դա, ի դեպ, դարավերջին էլ չենք մոռանում հպարտությամբ ամեն օր կրկնել, որ մենք ավանդապահ, ավելին՝ ավանդապաշտ ժողովուրդ ենք, եւ մեզ մոտ չգրված օրենքներն առավել անվրեպ են գործում, քան գրվածները... Բայց մեկ-մեկ էլ, չգիտես ինչու մտահոգվում ենք եւ սկսում պատճառները փնտրել, թե ինչու է ասենք ՍԵՓՀ-ով (սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ) վարակվածների թիվը վերջին տարիներին այդպես աճել եւ ինչու է դիտվում հիվանդների «երիտասարդացում»...

ԱՐՄԱՆԴ ԱՍԱՏՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՇԱԽՄԱՏ

Հաջողության հույսով

Շախմատի հերթական 33-րդ համաաշխարհային օլիմպիադան կանցկացվի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 13-ը, Կղզմիկիայի մայրաքաղաք Էլիստայում: Սա Կղզմիկիայի եւ Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) նախագահ Կիրսան Իլյումժինովի նախաձեռնությունն է: Նախատեսվում է, որ տղամարդկանց եւ կանանց մրցաշարերից յուրաքանչյուրում հանդես կգան մի քանի տասնյակ թիմեր:

Համաաշխարհային օլիմպիադային կմասնակցեն նաեւ Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականները: Իհարկե, հատկապես մեծ են սպասելիքները տղամարդկանց թիմից: Մեր շախմատիստներն ավանդաբար հաջող են հանդես գալիս օլիմպիադաներում, աշխարհի եւ եվրոպայի թիմային առաջնություններում: Հիշեցնենք, որ Երեւանում անցկացված 32-րդ համաաշխարհային օլիմպիադայում հանրապետության տղամարդկանց հավաքականը 5-րդն էր: Հիմա էլ մեր թիմը խաղացողների անհատական գործակիցներով աշխարհում 6-րդն է: «Պենց այդ տեղն էլ նորմալ եմ համարում մեզ համար, զուրցի ժամանակ ասաց Հայաստանի տղամարդկանց հավաքականի ավագ մարզիչ Արսեն Եղիազարյանը, ինչքան դրանից բարձր տեղ գրավենք, այնքան լավ, իսկ դրանից ցածր արդեն անհաջողություն է: Սակայն չպետք է մոռանալ, որ ուժեղ, հավասար թիմերը շատ են, իսկ մեկ կամ նույնիսկ երեք միավորը կարող է հավաքականին մի քանի տեղով առաջ կամ հետ տանել: Էլիստայում հաջողության առաջին ուղերձ ուղարկում եմ Հայաստանի թեթեւ նրա կազմում հանդես չեն գա Կասպարովը, Կարպովը, Կրամնիկը), Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Անգլիայի հավաքականները: Հուսով եմ, որ նրանց հետ լուրջ պայքար կմղեն Հայաստանի շախմատիստները: Օլիմպիադայից առաջ երկու հավաք ենք անցկացրել Ծաղկաձորի մարզաբազայում: Դրանք բավականին օգտակար էին: Մեր շախմատիստները հանգստացան եւ մարզվեցին: Շախմատից բացի մեծ տեղ էինք հատկացրել նաեւ ֆիզիկական մարզումներին վազք, լող, ֆուտբոլ, բասկետբոլ: Հոգնածությունը թոթափելու նպատակով ուղեւորություններ կազմակերպեցինք, մասնավորապես Սեւանա լիճ: Գուցե փոքր-ինչ անսովոր թվա մեր հավաքականի շախմատիստների հաջորդականությունը: Ներկայացնեմ մեր գրոսմայստերական թիմը ըստ խաղատախտակների: Ռաֆայել Վահանյան (անհատական գործակիցը 2630), Սմբատ Լպուտյան (2615), Վլադիմիր Հակոբյան (2655), Արաբես Սինապյան (2620), Կարեն Ասրյան (2600), Լեոն Անասասյան (2560): Ասեմ, որ վերջին տարիների մեր առաջատար շախմատիստ Վլադիմիր Հակոբյանն իմն է ցանկացել հանդես գալ 3-րդ խաղատախտակի վրա: Այդ բանը նա դատապարտել է նրանով, որ երկար ժամանակ չի մասնակցել մրցումների: Ճիշտն ասած, դժվար է կանխագուշակել, թե այդ «փոխատեղությունը» ինչ կերպ կազդի թիմի ելույթների վրա: Ամեն դեպքում մենք լավատես ենք»:

Համաաշխարհային օլիմպիադայում հաջող հանդես գալու վճռականությամբ չի են նաեւ մեր շախմատիստուհիները: միջազգային գրոսմայստեր է լինելու Դանիելյանը, միջազգային վարպետներ Գոհար Հյուդայանը, ՖԻԴԵ-ի վարպետներ Լիլիթ Սմբատյանը, Օքսանա Սիրմյանը: Հայաստանի հավաքականը երիտասարդական, ավելի ճիշտ դասական տարիքի է: Հուսանք, որ հենց իրենց տարիքին համապատասխան ավյունով էլ նրանք դրսեւորվելու են: Նախորդ օլիմպիադայում մեր կանանց հավաքականը ավելի քան 7 տասնյակ երկրների թիմերի դասակարգում բաժանեց 13-22-րդ տեղերը: Հավաքականի ավագ մարզիչ Նորայր Քալանթարյանն ու շախմատիստուհիները հույս ունեն, որ չեն նահանջի այդ դիրքերից: Մեր հավաքականի երեք անդամներ Դանիելյանը, Սկրտչյանը եւ Աղինյանը վերջերս հանդես եկան Երեւանում անցկացված Եվրոպայի մինչեւ 20 տարեկան աղջիկների առաջնությունում: Էլինան բաժանեց 4-5-րդ տեղերը, Լիլիթն ու Նելլին 6-8-րդ: Երեքն էլ համարում են, որ կարող էին ավելի հաջող հանդես գալ, եթե չլիներ մրցումների դակասը: Օրինակ, գրոսմայստեր Դանիելյանը ավելի քան 4 ամիս չէր խաղացել մրցաշարերում: Ինչեւէ, հուսանք, որ ավարտված առաջնությունը կնպաստի լավագույն ձեւով հանդես գալ Էլիստայում: Ասենք, որ մեր կանանց հավաքականը ամռան վերջին ուսումնամարզական հավաք էր անցկացրել Ծաղկաձորում:

Համաաշխարհային օլիմպիադայի օրերին տեղի կունենա նաեւ միջազգային ֆեդերացիայի 69-րդ կոնգրեսը, որի աշխատանքներին կմասնակցեն մեր հանրապետության ներկայացուցիչները:

Հայաստանի դասվիրակությունը երեւան-ից կմեկնի վաղը՝ սեպտեմբերի 25-ին: Նրա կազմում, հավաքականների անդամներից ու մարզիչներից բացի, ընդգրկված են ՖԻԴԵ-ի փոխնախագահ, հանրապետական ֆեդերացիայի նախագահ Վանիկ Զաքարյանը, ՖԻԴԵ-ի եվրոպական 5-րդ գոտու նախագահ, հանրապետական ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանը, միջազգային կարգի մրցավարներ, որոնք կսպասարկեն մրցումները:

Ա. Ա.

ԹԵՆԻՍ

Ֆեդերացիայի գավաթը՝ Իսպանիայի հավաքականի թենիսիստուհիներին

Մենում անցկացվեց աշխարհի կանանց թիմային առաջնության Ֆեդերացիայի գավաթի խաղարկության եզրափակիչը: 3-2 հաշվով հաղթելով տանտերերին՝ Շվեյցարիայի թենիսիստուհիներին, 5-րդ անգամ դարձավոր մրցանակը նվաճեց Իսպանիայի հավաքականը: Երբ մենախաղերում իսպանուհիներ Արանչա Սանչես-Վիկարիոն եւ Կոնչիտա Մարտինեսը հաղթեցին Պեսսի Շնայդերին ու դարձություն կրեցին Մարտինա Հինգիսից, հաշիվը հավասար էր՝ 2-2: Վճռեց զուգախաղը: Սանչես-Վիկարիոն եւ Մարտինեսը 6-0, 6-2 հաշվով առավելության հասան մրցակիցների նկատմամբ եւ թիմային հաղթանակ տոնեցին:

Հենմանի երկրորդ հաղթանակը

Ճաշենդում անցկացվեց միջազգային մրցաշարի բենքսանի նախագահի գավաթի խաղարկությունը: Եզրափակիչում հանդիպեցին Ռուսաստանի թենիսիստների առաջատար եզրերի Կաֆելնիկովը եւ նախորդ տարվա նմանօրինակ մրցումների հաղթող, անգլիացի Թիմ Հենմանը: Լարված պայքարն ավարտվեց վերջինիս հաղթանակով՝ 7-5, 6-4 հաշվով: Հենմանը երկրորդ տարին անընդմեջ նվաճեց գլխավոր մրցանակը: Մրցաշարի ավարտից անմիջապես հետո Ռուսաստանի հավաքականի թենիսիստները պետք է մեկնեին Ճապոնիա, որտեղ սեպտեմբերի 25-ից սկսվում է Դեւիսի գավաթի համար մրցախաղը ճապոնացիների հետ: Այդ հանդիպման հաղթողն իրավունք է նվաճելու ելնող տարի հանդես գալ Դեւիսի գավաթի խաղարկության բարձրագույն այսպես կոչված համաաշխարհային խմբում: Սակայն ռուսների մեկնումը փոքր-ինչ ձգձգվեց, քանի որ Ճապոնիայի իշխանությունները ուշացրեցին նրանց մուտքի վիզաների հարցը: Հայտնի է դարձել, որ թիմի ավագ Շամիլ Թարպիշեւը, բժիշկը եւ խաղացողներ Անդրեյ Չեսնոկովը, Մարատ Սաֆինը Ճաշենդից կանցնեն Սոչի՝ Կաֆելնիկովի եւ Մարատ Սաֆինի մասնակցությամբ Ֆրանսիայի դեմ խաղերին նախապատրաստվելու նպատակով:

Ա. Ա.

ՊՈԼՈՀԱՍՍՊՈՐՏ

Հինգ մեդալ միջազգայինում

Սեւաստոպոլ քաղաքում անցկացվեց միջազգային երիտասարդական մրցաշար, որին մասնակցեցին մեծ թվով երկրների մարզիկներ: Հայաստանից մրցաշարում հանդես եկան 8 բռնցքամարտիկներ, որոնցից 5-ը կանգնեցին պատվո պատվանդանին:

Մեր երիտասարդ բռնցքամարտիկներից այդ ներկայացուցչական ստուգատեսում առավել հաջող ելույթ ունեցավ երեւանցի Սասուր Ճունյանը (67 կգ քաշային կարգ): Նա 4 հաղթանակ տարավ (ընդ որում, եզրափակիչում պարտության մատնեց ուկրաինացի Անդրեյ Ցուրուպային) եւ ուժեղագույնը ճանաչվեց իր քաշային կարգում: Երկրորդ մրցանակակիրներ դարձան էջմիածնցի Անդրանիկ Ադամյանը (60 կգ) եւ գյումրեցի Բագրատ Օհանյանը (գերծանր քաշ): Երկու մարզիկներ՝ վանաձորցի Արտակ Սալումբանը (63,5 կգ) եւ երեւանցի Լեւոն Փայտյանը (81 կգ) մրցանակային երրորդ տեղ գրավեցին:

Ճիմային հաշվարկում առաջին հնգյակն այսպիսին է՝ 1. Ուկրաինա, 2. Ռուսաստան, 3. Հայաստան, 4. Թուրքիա, 5. Ռումինիա:

Այս մրցաշարը մեր հավաքականի անդամների համար հիանալի վարժաձրգում էր Արգենտինայում նոյեմբեր ամսին անցկացվելիք աշխարհի երիտասարդական առաջնությունից առաջ:

Սեւաստոպոլում նաեւ մեկ ուրախալի իրադարձություն տեղի ունեցավ, երեւանցի մրցավար Ժորա Օհանջանյանին ԵԱԲԱ-ի միջազգային մրցավարի կոչում շնորհվեց:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Երիտասարդական առաջնությունը

Մայրաքաղաքի «Գրանդ» ակումբի մարզադահլիճում անցկացվեց Հայաստանի երիտասարդական առաջնությունը, որին տղաների եւ աղջիկների 5-ական թիմեր մասնակցեցին:

Առաջնությունում թիմերը տեղեր գրավեցին հետեւյալ հաջորդականությամբ. տղաներ՝ 1. «Պոլիտեխնիկ», 2. Երեւանի «Կենտրոն» համայնք, 3. Վանաձոր, 4. «Գրանդ», 5. Արթիկ, աղջիկներ՝ 1. «Գրանդ», 2. Գյումրի, 3. «Պոլիտեխնիկ», 4. Երեւանի Ուրարտիի համայնք, 5. Ալավերդի: Ե՛վ տղաների, ե՛ւ աղջիկների թիմերում կային Հայաստանի մեծահասակների առաջնությունների փորձ ունեցող մարզիկ-մարզուհիներ: Այս առաջնությունը ցույց տվեց, որ ունենք հեռանկարային խաղացողներ, որոնք կարող են համալրել մեր ուժեղագույնների շարքերը: Առաջին հերթին նշենք «Պոլիտեխնիկ» թիմի խաղացող Նարիա Ալեքսանյանին, որը պարզապես փայլեց հեռահար նետումներ կատարելիս:

Երիտասարդական առաջնությունը, յուծիմիոններին ու մրցանակակիրներին որոշելուց բացի, նաեւ լավ փորձաձրգում էր հանրապետության տղամարդկանց եւ կանանց առաջնությունների երրորդ փուլից առաջ: Տղամարդիկ իրենց մրցաշարը կանցկացնեն Արթիկում, այսօրվանից, իսկ կանայք կմրցեն Վեդիում, սեպտեմբերի 27-ից:

ԲԱՂՍՐԼՅՈՒ

Օգնեցին հովանավորները

Հայաստանի պատանեկան հավաքականի անդամները վերադարձան Նիժնի Նովգորոդից, որտեղ մասնակցում էին միջազգային մրցաշարի:

Մեր հանրապետության ներկայացուցիչներից առավել հաջող հանդես եկան Անանա Օհանյանը եւ Կարեն Գոհարյանը: Միանալով՝ նրանք աղջիկների զուգախաղերում գրավեցին 3-րդ մրցանակային տեղը: Անանան ու Կարենն տարան 5 հաղթանակ եւ միայն 1-ում պարտություն կրեցին: Այս երկու մարզուհիները նույնանման արդյունքներ ցույց տվեցին մենախաղերում. նրանք բահեցին 3-ական հանդիպում եւ 1-ական խաղ տանուլ տվեցին: Նրանք իրար հետ բաժանեցին 5-6-րդ տեղերը: Նշենք, որ Օհանյանին շնորհվեց գեղեցիկ խաղի համար հատուկ մրցանակը:

Տղաների մրցաշարում Հայաստանի բադմինտոնիստներից լավագույն արդյունքը ցույց տվեց Արթուր Գեւորգյանը: Երգանակի մրցանակներ, ոնց կազմված մենախաղերի մրցումներում նա գրավեց 7-րդ տեղը:

Ինչպես նշեց Հայաստանի պատանեկան հավաքականի ավագ մարզիչ Վալերան Գեւորգյանը, միջազգային մրցումներին մեր պատանի մարզիկների մասնակցությունը հնարավոր դարձավ հովանավորների շնորհիվ, ինչի համար բադմինտոնիստները շնորհակալություն են հայտնում նրանց:

ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Հաղթանակներ Թեհրանում

Իրանի մայրաքաղաքի «Արարատ» ակումբի մարզահանդեսում անցկացվեցին հանձնակական խաղերի ծրագրով մրցումներ բասկետբոլից, սեղանի թենիսից եւ շախմատից: Մրցումներին մասնակցեցին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Իրանի մարզիկները:

Երեք մրցաձեւերում էլ հայաստանի ներկայացուցիչները հաջող հանդես եկան: Նրանք առաջինն էին բասկետբոլի եւ սեղանի թենիսի թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց մրցումներում, շախմատի մրցաշարում: Նշենք, որ մեր կանանց բասկետբոլի հավաքականը հանդես է եկել «Ցեմենս» եւ «Պոլիտեխնիկ» թիմերի, տղամարդկանցը՝ «Մեծամոր» խաղացողներով:

Սեղանի թենիսի մրցումներում հայաստանի մարզիկները նվաճեցին բոլոր առաջին մրցանակները: Մեծահասակների դասում հաղթեցին Արտակ Հարությունյանը եւ Մարիաննա Մահակյանը, կրտսերների դասում՝ Սուրեն Ասատրյանը եւ Լուսն Խաչատրյանը:

Մեր պատվիրակության ղեկավար Ռոբերտ Ասատրյանի եւ իրանցի կողմի միջեւ պարտամանավորվածություն ձեռք բերվեց, որ եկող տարվանից սկսած հայաստանի սեղանի թենիսիստները մասնակցեն Իրանի ակումբների թիմային առաջնությանը, որն ավանդաբար անցկացվում է ապրիլ ամսին:

Ամերիկացի հանրաճանաչ բռնցքամարտիկներ Էվանդեր Հոլիֆիլդն եւ Ռոն Ռիդը Ատլանտա քաղաքում անցկացված մրցամարտի 10-րդ տարեդարձի հանդեսում Հոլիֆիլդը հաղթեց իր մրցակցին եւ պահպանեց աշխարհի չեմպիոնի կոչումը

digitised by A.R.A.R.@

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՊԵՐ

Կանադայում կիսանդիրն հայկական առաջարկն ու կանադական դահանջարկը

Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Կանադայի Տորոնտո քաղաքում տեղի ունենալիք Կանադայի ամենախոշոր ցուցահանդեսներից մեկում՝ բարձր տեխնոլոգիաների մասնագիտական ցուցահանդեսում, իրենց արտադրանքներով կմասնակցեն նաեւ հայկական մոտ մեկ տասնյակ ձեռնարկություններ: Իսկ հոկտեմբերի 3-4-ը կկազմակերպվի Ազգային բիզնեսի տոն՝ կանադահայ համայնքի գործուն մասնակցությամբ: Այս տեղեկությունը հաղորդելու համար երեկ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունում լրագրողներին հրավիրել էր նախարար Գառնիկ Նանագուլյանը: Պատասխանելով «Ազգի» հարցին, թե ինչպես՝ն հայկական արտադրանքը կարող է մրցունակ լինել կանադական շուկայում, որն Նանագուլյանը, որպես Կանադայում ՀՀ նախկին դեսպան եւ այդ երկրի տնտեսությանն ու շուկայի հնարավորություններին գիտակ մարդ, լավատեսորեն պատասխանեց. «Ես որեւէ կասկած չունեմ, որ մեր արտադրանքները կարող են հեշտությամբ վաճառվել Կանադայում»:

Նախարարը տեղեկացրեց, որ Տորոնտոյի ցուցահանդեսում հայկական ձեռնարկությունները («Մարս», «Մասրա», «Արմավիր», «Էլեկտրալամփիչ», «Ինստրուսանոկ», «Մշակ», «Արմենմոտոր», «Ասեֆս», «Արկա» եւ «Սեդիք») կունենան մոտ 12 արտադրանքի ցուցադրման տաղավարներ: Դրանցից 4-ում միայն կցուցադրվեն Հայաստանի մասին տեղեկատվական նյութեր ու ցուցանմուշներ: Ինչ վերաբերում է ձեռնարկություններին, ապա արդեն Կանադայում լույս են տեսել *Գրանց մասին* տեղեկատվական գրքույկներ, կատալոգներ, իսկ ցուցադրվելիք արտադրանքն արդեն «ճանաչարհին է»: Ցուցահանդեսի եւ Ազգային տոնի կազմակերպչական աշխատանքները հայկական կողմից իրականացնում է Ճարտարման հայկական գործակալությունը (ՃԱԳ), իսկ կանադական կողմից՝ կանադական կառավարությանը կից Առեւտրի խթանման օգնության գրասենյակը, որոնք էլ հաստեղ, ուսումնասիրելով Հայաստանի բարձր տեխնոլոգիաների արտադրության դորձը, ընտրել են մասնակից այն ձեռնարկություններին, որոնք լույս հնարավորություններ ունեն մրցունակ լինելու կանադական շուկայում եւ իրացնել իրենց արտադրանքը: Ստեղծվել է նաեւ կանադա-հայկական բիզնես խորհուրդ, որը կօժանդակի հայ-կանադական նախագծերի իրականացմանը: Ի դեմ՝ հատուկ շեշտվեց, որ որեւէ միջազգային ցուցահանդեսին մասնակցությունը շատ թանկ հաճույք է, մոտավոր հաշվարկներով՝ մոտ 150 հազ. ԱՄՆ դոլար: Ճախսերի մոտ 95 տոկոսը կանադական կողմը վերցրել է իր վրա, հայկական ձեռնարկություններում վճարելու են միայն իրենց տրամադրված տարածքների արժեքը՝ մոտ 2000 ԱՄՆ դոլար:

«Հայաստանի մասնակցությունը կանադական խոշոր ցուցահանդեսին մինչ այժմ մեր նախարարության կողմից (համենայն դեպս իմ օրոք) արված ամենալուրջ արտահանման ծրագիրն է», ընդգծեց պրն Նանագուլյանը: Ըստ նրա, նախնական ուսումնասիրությունների համաձայն, հայկական բարձր տեխնոլոգիայի բնագավառի արտադրանքը լուրջ հետաքրքրություն կունենա հյուսիսամերիկյան շուկայում: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն պրն Նանագուլյանը չհերքեց այն փաստարկը, որ կա հայկական եւ արեւմտյան, մասնավորապես արտադրանքի յուրահատուկ է, քանի որ այդ երկրի յուրահատուկ բարձր տեխնոլոգիաների առումով) տարբերվում են մեր յուրահատկություններից: Որոշակի աշխատանք է պետք կատարել կանադական յուրահատկությունը բանակարելու համար, եւ այդ նոթատակով մասնակիցներից բոլորը հնարավորություն կունենան ծանոթանալ դրանց:

Ի դեմ՝ նախարարը լրագրողներին ներկայացրեց իր խոսքերով բանակարին ծիծաղելի տվյալներ. 1996 թ.-ին արտահանման ներուժման ծավալը Հայաստանի եւ Կանադայի միջեւ եղել է ընդամենը 150 հազ. դոլար, իսկ անցյալ տարի՝ մոտ կես մլն: Մի ծիծաղելի տվյալ եւս՝ Հայաստանից Կանադա է արտահանվում հիմնականում սուրճ: Սակայն նախարարը, ինչպես միշտ՝ լավատես էր, դատելով Հայաստանում կանադական ներդրումների առկայությունից եւ ծրագրերից, հնարավոր է, որ այդ ծավալները մեծանան: Մասնավորապես տեղեկացվեց, որ արդեն կան գործող հայ կանադական մի քանի համատեղ ձեռնարկություններ՝ ծխախոտագործության («Գրանդ Տաբակո»), տեխնիկի (կանադական կողմից մեծաքանակ ոստվերներ ունեն «Էրբունի» եւ «Տարդ» միավորումները, որոնց արտադրանքն այսօր վաճառվում է կանադական խոշոր առեւտրային կենտրոններում), ոսկերչության (երկու համատեղ ձեռնարկություն) բնագավառներում եւ վերջապես՝ ամենախոշոր կանադական ներդրումը (մոտ 70 մլն ԱՄՆ դոլար) կանադա-ամերիկյան **First Dynesty Mines** ընկերության կողմից՝ ոսկու վերամշակման ոլորտում: Ներկայումս լուրջ բանակցություններ են վարվում կանադական խոշոր ընկերությունների հետ էներգետիկայի ոլորտում համագործակցություն սկսելու նոթատակով:

Այսպիսով, Ճարտարման հայկական գործակալության տնօրեն Գ. Եղիազարյանի խոսքերով՝ «ուստի կանադայում կիսանդիրն «հայկական առաջարկն ու կանադական դահանջարկը»: Մնում է միայն սպասել, թե ինչպե՞ս կավարտվի այդ հանդիպումը:

ԳԱՅԱՆԵ ԴՈՒՔՈՍՅԱՆ

Հարգելի ընթերցող

Սկսված է «Հայիոս» միավորման «Կոնսակտ» ոլեսական ձեռնարկության կողմից Հայաստանի Հանրապետությունում, Ռուսաստանի Դաշնությունում եւ արտասահմանյան այլ երկրներում տպագրվող թերթերի, տեխնիկական, մասնագիտական, հասարակական-քաղաքական, գեղարվեստական ամսագրերի եւ գրքերի 1999 թվականի առաջին կիսամյակի բաժանորդագրությունը:

Բաժանորդագրությունը կատարվում է հանրապետության քաղաքների ու գյուղերի բոլոր փոստային բաժանմունքներում:

Երեւան քաղաքում հիմնական ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար, փոխանցման կամ կանխիկ վճարման ձեւով, բաժանորդագրությունը կատարվում է թիվ 2 փոստային բաժանմունքում (հասցեն Սարյան 22, բարձրահարկ շենքի առաջին հարկում):

Ուսումնական հաստատությունների, գրադարանների, բժշկական հիմնարկների, ինչպես նաեւ անհատ քաղաքացիների համար ռուսական պարբերականների անվանացուցակում զետեղված բաժանորդագրական գինը սահմանվում է գեղջուկ, իսկ քաղաքում՝ քաղաքացիների եւ ուսանողների համար ռուսական կատալոգներով բաժանորդագրային գինն առավել ցածր է:

Բաժանորդագրվողները թերթերը եւ ամսագրերը կարող են ստանալ իրենց ցանկացած հասցեով:

Երաշխավորում ենք բարձրակարգ սպասարկում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել **53-80-06, 53-38-02, 71-66** հեռախոսահամարներով:

Շտապեք բաժանորդագրվել:

«ՀԱՅԻՈՍ» ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՆՈՒԱ» հայաստանյան երգչախումբ
Առաջին անգամ Երեւանում

(Սեպտեմբերի 24-26-ի ծրագիր)

		Մեկնում Մոսկվա-1	Ելք	Գալիս	Նշումներ
Հինգշաբաթի, սեպտ. 24	Գառնի եւ Գեղարդ	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Սեւան	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Խոր Վիրապ	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Ս. Էջմիածին, Ս. Գայանե, Զվարթնոց	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Շրջագայություն Երեւանի քաղաքում	17:00	17:10	17:20	- Տեւողությունը 1 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
Ուրբաթ, սեպտ. 25	Գառնի եւ Գեղարդ	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Սեւան	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Խոր Վիրապ	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Ս. Էջմիածին, Ս. Գայանե, Զվարթնոց	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Շրջագայություն Երեւանի քաղաքում	17:00	17:10	17:20	- Տեւողությունը 1 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Զբոսանք, ճաշակում, Նորավանք	8:00	8:15	8:30	- Զբոսանք, ճաշակում, Նորավանք - $15-ին համարժեք դրամ
Շաբաթ, սեպտ. 26	Գառնի եւ Գեղարդ	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Սեւան	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Խոր Վիրապ	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Ս. Էջմիածին, Ս. Գայանե, Զվարթնոց	10:00	10:15	10:30	- Տեւողությունը 3-4 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ
	Շրջագայություն Երեւանի քաղաքում	17:00	17:10	17:20	- Տեւողությունը 1 ժամ - Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ

- Տեղերը սահմանափակ են. դանդաղարեք ամեն օր, ժամը 9-20-ն
- Բոլոր երգչախմբերում անգլիախոս ուղեկցող, սաղ ընդելիք, հայկական երաժշտություն
- Նախորդ դայմանավորվածությամբ այցելություն Տաթեւ, Զբոսանք, Դաղդաս, Դարաքաղ եւ այլն
- Մանուկների խնամք (child care)
- Գնումների օժանդակություն, անշարժ գույք
- Դյուրանցի աղտահոդում

Հեռախոս (37-42) 567246
Ֆաքս (37-42) 567246 · e-mail: voske@hats.arminco.com
Հասցե՝ 116 Նալբանդյան, Երեւան, Հայաստան

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Օրինաց երկիր» կուսակցության նախաձեռնած մեր դեսությանը եւ հասարակությանը հուզող հիմնախնդիրների հասարակական քննարկումների օրջանակում անցկացվող հերթական քննարկումը կկայանա 1998 թ. սեպտեմբերի 25-ին, ժամը 10:00-ին, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում:

Քննարկման թեման՝ «Սոցիալական հաղթահարման հիմնախնդիրները եւ օրենսդրական առաջարկման անհրաժեշտությունը»:

Հրավիրվում են բոլոր շահագրգիռ կազմակերպությունները եւ անհատ գործիչները:

«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Junior Achievement of Armenia

has a vacancy for Deputy Director's position. Fluent English and some economic background is required.

Address: 39 Abovyan, # 21, Yerevan, Armenia
Tel: 52 08 37, 56 67 50
AT&T 151 652

ՀԵՌՈՒՏԱՑՐԱԳՐԵՐ

24 սեպտեմբեր

17.00 Հայրեր
17.20 Նոեպ
17.50 Սպորտֆիլմ «Մենամարտի ձկնորսությունը»
18.00 Ֆեդերացիայի «Նպատակ»
19.00 Խոսող ստեղծագործություններ
19.30 Մարդը եւ օրենքը
20.00 Հայրեր
20.35 1 լիտր
20.50 Ոնգից դեպքեր
21.15 Պիեսաբաթի
21.50 Տեսաֆիլմ «Սարդի հայց»
22.25 Գ/Ֆ «Փոքրիկը»
24.00 Հայրեր
00.15 Վերջիրեր

ՆՈՐՔ

19.00 Լուրեր
19.15 Սպորտֆիլմ
19.30 Մեծ եւ կենդանիներ
19.45 Միասին (սերիա)
20.30 «Մեռելեր» (9-ոդ ժամ)
21.00 Լուրեր
21.20 Լուսանցք
21.25 Մատեր հուսում են
21.30 Գիշեր
21.55 Մեծերի զրույցներ
22.00 «Ոսկեդար» Նորեան» սերիալ
22.30, 23.10 Կինոերաժշտություն Գ/Ֆ «Նոր Ոսկեդարեր»
23.00 Լուրեր

19.05 Մանրի սուրհանդակ
19.15 Դատարան
19.25 Սպորտագիր
19.50 Ոչ նեսանավոր մարդկանց կյանքը
20.00 Գ/Ֆ «Լեմանդոս» (14-ից բարձր)
(20.55 Սուրհանդակ)
22.00 Մանրի սուրհանդակ
22.10 Քարոզ
22.30 Գեղեցիկ կյանք, կամ թեյարան տեսակ մեկ մեկնման
22.55 Սուրհանդակ
23.20 Գազ... կամ Ոգեկոչություն
00.00 Դատարան
00.55 Սուրհանդակ
00.10 Պիեսաֆիլմ կենսական Գ/Ֆ «Մեսայիներ հարմարան»
(00.55, 02.05 Սուրհանդակ)

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 01.25 Լուրերագրություններ
10.15 Մեհրաք «Ինչն էր»
11.30-15.45 Ինքնին TV
16.20 Ռուսերեն «Ինչ ինչի սեռախնդրի տեսքերը»
16.45 Դասարի ընտրությունները
17.10 Մանկական ասմունքներ
17.40 Մեհրաք «Մինչդարի նոր ազգանունը»
18.10 Սիրեն 16 տարեկան եւ ավելի
19.30 Ուշադրի տարր
19.20 «Ինչն էր»
20.05 Պրկ ժամ
20.30 Սեղ գիտաֆիլի կենդանիները
21.00 Նորության ռոմանսներ
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Գ/Ֆ «Լանդիս ինձ ոնգի լուսանցք հեռուն»
00.35 Մենագրի ելեկտրաֆոներ Ռաֆի. Պետրոսյանը եւ Սուրենի «13 լեզվերի» մեջ
01.35 Հայրաղ տան
02.10 Դեսանիվ «ԲՄՈ-2»

ՊՐԻ

8.00 Բարի լույս, Ռուսաստան
10.45 Մեքենայի բանանմամբ
11.00 «Սանցայ Բարբարա»
11.45 Սպորտներ միասով
11.50 Սարդարյան ասմունքներ
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.35 Գ/Ֆ «Գլխարկ»
14.05 Երգեհոնագրություններ կենդանիների մասին
15.35 Գ/Ֆ «Մեր առաջին հայացքից»
17.00 Սպորտֆիլմ «Բոցերներ եւ արձագներ»
17.15 «Մանկամատեր Սուրբանին»
17.30 Ֆեստիվալներ «Սեպտեմբերի հանդիպումներ»
18.30 Սեսարան
19.00 Ոնդ լի դարի
19.30 Ֆեստիվալներ «Մարդ, կանայ եւ վերջիններ»
20.30 Ելեկտրաֆոներ «Մարդիս ոնգան»
21.30 Ռոմանսներ
21.45 Բարի երեկո, ցերեկի
22.15 Կինոյի ժամ. Գ/Ֆ Օգնանանց» (ԱՄՆ)
00.05 Մեհրաք «Ելեկտրաֆոներ»
01.30 Մեքենայի բանանմամբ
01.45 Սպասելիներ

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) • տեղեկագրերով • մագնիսական սկավառակներով • INTERNET գանցով (http://www.arminco.com/spyur)

«Ազգ» Մեծ» հասարակության տպարան, Երեւան 23, Աբովյանյան 2 Տրամաքանի թիվ 65. Գործ 69149. Պատվեր 911 Տպաքանակ 4000 Ստորագրված է տպագրության 23. 09. 1998 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@